



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

39 - 0  
A - 26

653

1874

0272-17/III 78  
888 - 10/II 38

82-2

F-31

ԵՐԿԻՆՔ ԵՒ ԵՐԿԻՐ

ՍՐԲԱԶԱՆ ՈՂԲԵՐԳ

Ի

ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆԷ



2003


ԿՈՄՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

1874

၇၂၂၂၂၂ ၂၂ ၂၂၂၂၂၂

၂၂၂၂၂၂ ၂၂၂၂၂၂

၂၂၂၂၂၂ ၂၂၂၂



82-2

F-26 47

61

# ԵՐԿԻՆՔ ԵՒ ԵՐԿԻՐ

ՍՐԲԱԶԱՆ ՈՂԲԵՐԳ

Ի

ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆԷ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

1874

118

# ԵՐԿԻՆՔ ԵՒ ԵՐԿԻՐ

ՄՐԱՋԱՆ ՈՂԲԵՐԴ



## ՄՆՆԴՈՑ ԳՐՔԻՆ ՍԱ ՄԱՍԻՆ ՎՐԱՑ ՀԻՄՆԵԱԼ

«Եւ եղև զի որդիք Աստուծոյ տեսին զի դասերք մարդկան գեղեցիկք էին, և առին իւրեանց 'ի կնութիւն զայնոսիկ 'ի նոցանէ որք հաճոյ թուեցան ինքեանց»:


4961  
1001

Ի  
ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆԷ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ Ի ԳԱՂԻԱԿԱՆԷ

ԴՈՄՆԻ ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ ԱԳԱՊԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ



— 1874 —

Ա Ն Ձ Ի Ն Ք

ՀՐԵՇՏԱԿՔ { ԱՍՄԻԱՍՔ,  
 ԱԶԱՐԻԷԼ,  
 ԱՍՓԱՅԷԼ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ

ԱՐՔ { ՆՈՅ  
 ՍԵՄ ՅԱՐԵԹ ՈՐԳԻՐ ՆՈՅԻ  
 ԻՐԱՏ

ԿԱՆԱՅՔ { ԱՆԱՀ  
 ԱՀՕՂԻՒՄԱՍ

ՊԱՐ ՈԳԵԱՑ  
 ՊԱՐ ՄԱՀԿԱՆԱՅՈՒԱՑ

ԱՌ

ԻԳԱԿԱՆ ՍԵՌՆ ՀԱՅԿԱԶՈՒՆ  
 ՈՒՂԵՐՁ

Ազգային վարժարանի մը մի խոնարհ աշակերտուհին Ձեզ կ'ընծայէ, Ազնիւ Հայուհիք, իւր քըրտանց այս դոյզն արդասիքը :

Ո՛չ եթէ իբրու մեծ ինչ կը ձօնէ զայն Ձեզ դիտէ թէ պարճանաց արժանի բան մը չէ: գիտէ նաև թէ քանի օ՛ն դժուարին է դպրութեանց փառաւոր՝ այլ դժուարաւորս ասպարէզին մէջ ընթանալ, և կ'ըզայ թէ իւր քայլերն կարի տկար ու դողդոջուն են առ այս :

Մի միայն, նախանձո՛տ Պրոմէթէոսի, ուզած է յանդուգն ընծայարեր մ'ըլլալ առ իւր սեռն՝ դըրական բուրաստանին ծաղիկներէն, որ, բա՛րէ, իբրև փակեալ դրախտ մ'եղած է Հայուհւոյն համար՝ կարի սիրահար թունաբոյր ծաղիկներու :

Այս է իւր աշխատութեան բովանդակ արժանիքը և իւր յանդուգնութեան բոլոր չքմեղութիւնը:

Գործոյս թարգմանչուհին կը սիրէ ուրեմն յուսալ թէ իւր օրինակին հետևողներ պիտի ունենայ՝ յոյժ կարող քան զինքն, որք Հայ իգական Սեռին ճակատն արատող մտաւորական աղքատութեան կեղտը պիտի ջնջեն, և, յուսանչոյլ աստղեր, Հայկական դրականութեան հորիզոնը նոր ու կենսասփիւռ լուսով մը պիտի լուսաւորեն :

Եւ այս պիտի ըլլայ իւր փառքը . . . :

1874 Յունիս 3  
 Բերա

ԴՈՄՆԻ ԳԱՐԻԷԼԵԱՆ  
 ԱՇԱԿԵՐՈՒՅԻ ԱԳԱՊԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ



## ԵՐԿԻՆՔ ԵՒ ԵՐԿԻՐ

### ՏԵՍԻԼ Ա.

( Գաւառ անտառային և լեռնային՝ մերձ ի լեռան  
Արարատ • կէս գիշեր )

#### Ա.ՆԱ.Հ. , Ա.ՀՕԼԻԲԱՄԱ.

Ա.ՆԱ.Հ. : Մեր հայրը կը ննջէ . ահա այն ժամն ուր զմեզ սիրող ոգիք զԱրարատ լեռը պսակող մթին ամպոց մէջէն առ մեզ կ'իջնեն թեւաբաց - : . . ոհ , ի՞նչպէս կը տրուիէ սիրտս :

Ա.ՀՕԼԻԲԱՄԱ. : Օ՛ն , կոչենք զանոնք մեր սովորութեանն համեմատ :

Ա.ՆԱ.Հ. : Բայց աստղերն չեն երեւիր : Կը դողամ :

Ա.ՀՕԼԻԲԱՄԱ. : Ես ալ կը դողամ , բայց իրենց յապաղման վախն է միայն զիս դողացնողը :

Ա.ՆԱ.Հ. : Քոյր իմ , թէպէտ և Ազարիէլը կը սիրեմ առաւել . . . . քան զչափ . ոհ , ի՞նչ պիտի ըսէի , սիրտս կ'ամպարչտի :

Ա.ՀՕԼԻԲԱՄԱ. : Եւ միթէ երկնային էակները սիրելն ամպարչտութիւն է :

Ա.ՆԱ.Հ. : Բայց , Ահօլիբամա , նուազ կը սիրեմ զԱստուած յորմէ հետէ իւր հրեշտակը կը սիրէ զիս : Անուշտ բարի գործ մը չէ այս . և թէպէտ յուր չերեւիր ինձ , բայց չեմ գիտեր ինչո՞ւ խիղճս կը յուզի և կը խուովի անհանգիստ :

ԱՆՕԼԻԲԱՄԱ : Միացուր ուրեմն քու բախող երկրի մէկ գաւկին հետ , զիջիր անարդ աշխատութեանց : Յարէթ կը սիրէ զքեզ երկար ժամանակէ ի վեր . ամուսնացիր իւր հետ , և հողդէն էակաց մայր եղիր :

ԱՆԱՆ : Ոչ ինչ նուազ պիտի սիրէի զԱզարիէլ , եթէ մահկանացու ալ ըլլար : Ուրախ եմ սակայն որ չէ : Անոր մահուանէն վերջը սպրեւու վիշտը չպիտի կրեմ , և , երբ կը խորհիմ թէ իւր անմահ թեւերն օր մը իրենց հովանին պիտի տարածեն երկրածին հէք աղջկան շիրմին վրայ , որ պաշտեց զինքը ինչպէս որ ինք զԱմենակալը կը պաշտէ , մահը նըւազ սոսկալի կերեւի ինձ : Եւ սակայն կը ցաւիմ իւր վրայ . իւր վիշտը դարեր պիտի տեւէ . գէթ իմ վիշտս ալ նոյնպէս յաւիտենական պիտի ըլլար , եթէ ես Սերովբ մը լինէի և նա կորստական էակ մը :

ԱՆՕԼԻԲԱՄԱ : Ըսէ մանաւանդ թէ քու մահուանէդ յետոյ երկրին մէկ ուրիշ աղջիկը պիտի ընտրէ և սիրէ զնա ինչպէս երբեմն զԱնահ կը սիրէր :

ԱՆԱՆ : Երանի՛ թէ այդպէս ըլլայ , եթէ այն աղջկան սէրը պիտի կարենայ երջանիկ ընել զինքը և իւր աչաց արտասուքը ցամքեցնել :

ԱՆՕԼԻԲԱՄԱ : Եթէ Սամիասայի սիրոյն նկատմամբ այդպիսի կատկած մ'ունենայի , թէպէտ երկնային Սերովբէ մ'է , կը մերժէի զայն ի բաց : Բայց կոչե՛նք զանոնք , ահաւասիկ ժամն հասած է :

ԱՆԱՆ : Ո՛վ Սերովբէդ , լսէ՛ ինձ օթեվանիդ բարձունքէն . ո՛րն որ ալ ըլլայ այն աստղը որ քու փառքդ կը բովանդակէ , թէ՛ երկնից յաւիտենական խորոց մէջ եօթն հրեշտակապետաց հետ հսկես , և թէ՛ անհուն և անծայր միջոցին մէջ աշխարհներ թռչին քու լուսանիւթ թեւոցդ առջեւէն , ո՛հ , խորհէ՛ զքեզ սիրող աղջկան վրայ . և թէպէտ նա ոչինչ է քեզ համար , խորհէ՛ որ դու անոր համար ամեն բան ես : Գու չես ճանչեր— և իցի՛ւ թէ ես միայն ճանչէի— արտասուաց զառնութիւնը : Յաւիտենականութիւնը քու բաժինդ է , աչերդ կը ճառագայթեն անչէջ և անատուեր երկնային գեղեցկութեամբ մը . սէրը միայն կրնայ զքեզ

առ իս յանկուցանել , և պէտք է որ խոստովանիս թէ երբէք քան զիս սիրատարի երկրաւոր սիրուհի մը չըսցաւ երկնից տակ : Գու կը թռչիս կ'անցնիս անթիւ աշխարհներէ , կը տեսնես Անոր դէմքը , որ զքեզ այդպէս մեծ և փառաւոր ստեղծեց , ինչպէս որ զիս ալ Եդեմային դրախտէն արտոբեալ ցեղին յետին արարածներէն մին ըրաւ : Եւ սակայն , ցանկալիդ իմ Սերովբէ , լսէ՛ ինձ , որովհետեւ սիրեցիր զիս , և ես չեմ կրնար սպրիլ եթէ դու քու յաւիտենականութեանդ մէջ մոռնաս զայն՝ որու սիրտը մահն իսկ չկրնար արդեւուլ քեզ համար բարախեղէ : Ո՛վ դու , անմահ էութիւն , մեծ է անոնց սէրը որ կը սիրեն նաև մեզաց և երկիւղի մէջ , և կ'զգամ արդէն որ մեզքն ու երկիւղը սրտիս մէջ իրարու հետ կը պատերազմին : Կերէ՛ , ո՛վ Սերովբ , ներէ՛ Ադամայ աղջկան մ'այսօրինակ խորհուրդներուն . վիշտը մեր էութեան անբաժին տարրն է , և երջանակութիւնը մեր աչերէն քողարկուած դրախտ մը , թէպէտ և երբեմն մեր երազներուն հետ կուգայ խառնուիլ : Ար մօտենայ այն ժամը , ուր կզգամք թէ բոլորովին մոռացութեան և արհամարհանաց մէջ լքեալ չեմք . . . երևցիր , երևցիր , բնակդ երկնից , իմն Ազարիէլ եկու՛ր հոս և թո՛ղ աստղերն իրենց լուսովը բաւականանան :

ԱՆՕԼԻԲԱՄԱ : Ո՛վ Սամիասա , երկնային դաւառաց ո՛ր մասին ալ հրամայես . . . թէ՛պէտ և պատերազմիս այն ոգեաց դէմ որ բնաւից զօրութեանց հեղինակին ձեռքէն իւր պետութիւնը յափշտակել կը յանդգնին . թէ՛պէտ յետև կոչես անհունութեան անդրնդոց մէջ մուրրող թափառիկ դունտ մը՝ որոյ բնակիչք իրենց կենաց ծայրն հասած , մեր աշխարհի կենսակիր փոշոյն վատարախտ ճակատադրին հողորդ կ'ըլլան , մեր աշխարհին որ՝ իրենցին նման՝ օր մը կորսուելու դատապարտեալ է , և թէ՛պէտ ստորին Քերովբէից հետ միաբան հաճիս իրենց նուագաց ձայնակցիլ Սամիասա , զքեզ կը կոչեմ , քեզ կ'սպասեմ և զքեզ կը սիրեմ : Շատեր կրնան զքեզ պաշտել . սակայն ես ո՛չ : Եթէ կը յօժարիս իջնել առ իս , ո՛հ , իջիր և բախտակից եղիր ինձ : Թէպէտ և ես հողածին էակ մ'եմ և դու եդեմական

ալեաց վրայ բեկբերկող արեգական նշոյններէն աւելի դե-  
ղափայլ ճառագայթներէ կազմեալ , սակայն քու անմա-  
հուկութիւնդ չկրնար աւելի եռանդուն սիրով մը փոխարինել  
իմ սէրս : Ճառագայթ մը կայ յիս որ , կըզգամ , քու և քու  
Աստուծոյդ լոյսէն ցայտած կայծ մ'է . թէպէտ և ներելի  
չէ իրեն շողալ տակաւին , կրնայ երկար ժամանակ թաքուն  
մնալ . մահը և անոր յառաջընթաց ցաւերն ու ախտերն  
մեր Եւա մօրմէն մեզ թողուած ժառանգութիւնն են :  
Բայց սիրտս կ'արհամարհէ զանոնք . թէպէտ այս կեանքը  
պիտի վերջանայ , բայց միթէ ասիկա պատճառ մ'է որ մենք  
բաժնուինք . դու անմահ ես . . . ես ալ քեզ նման անմահ  
եմ . . . կզգամ . . . այո՛ . կզգամ իմ անմահութիւնս .  
յաղթող վշտաց , արտասուաց , ժամանակին , անլուելի  
ձայնով մը կը յեղյեղէ ինձ անդու սա ճշմարտութիւնը՝  
«դու միշտ պիտի ապրիս » . բայց արդեօք երջանկութեամբ  
մէջ : Չեմ գիտեր և չեմ իսկ ուզեր գիտնալ , այս գաղտ-  
նիքը Ամենակալին կը վերաբերի , որ երջանկութեան և  
թշուառութեան աղբիւրները անթափանց քողով մը վա-  
րագուրած է . բայց նա չ'կրնար մեր գոյութիւնը ջնջել . ո՛չ  
քու , ո՛չ իմ : Կրնայ զմեզ փոխել , բայց չկրնար ոչնչացնել :  
Մեր էութիւնը յաւիտենական է ինչպէս իւրն , և բռնա-  
դատեալ կռուելու իրեն դէմ , եթէ նա կռուիլ ուղէ մեզ  
դէմ : Կրնամ քեզի հետ ամէն բանի հաղորդ ըլլալ , նոյն  
իսկ անվերջանալի վշտաց . որովհետեւ դու ուզեցիր իմ  
մահկանացու կեանքիս մասնակից ըլլալ , միթէ ես քու յա-  
ւիտենականութեանդ առջև յե՞տս պիտի ընկրկիմ , . . .  
ոչ , եթէ օձին չարաթոյն խայթոցն իմ սիրտս ծակէ , եթէ  
նոյն իսկ դու օձին նմանիս և պատես զիս քու գալարնե-  
րովդ , պիտի ժպտիմ առանց զքեզ անիծելու , և պիտի սեղ-  
մեմ զքեզ դարձեալ զրկացս մէջ ոչ ինչ նուազ սիրավառ  
և ուժգին . բայց իջի՛ր , և ընդունէ՛ այն սէրը զոր մահկա-  
նացու աղջիկ մը անմահի մը կ'ընծայէ : Եթէ երկնից մէջ  
աւելի երջանկութիւն կը գտնես քան որչափ չեսկրնար տալ  
և ընդունիլ իմ քօլս . . . կեցիր ուր որ ես :

ԱՆՍԱՆ : Ո՛հ , քոյր իմ , քոյր իմ , իրենց դէպ ի մեզ պանաս

Լը կը տեսնեմ , գիշերային մթութեան մէջ լուսաշաւիղ հետք  
մը թողլով իրենց ետեւէն :

ԱՆՍՈՒԻՍՄԱ : Իրենց լուսանիւթ թեւերն մէկդի կը վա-  
նեն ամպերը իբրու թէ վաղուան արշալոյսը բերէին :

ԱՆՍԱՆ : Բայց , ո՛հ , եթէ մեր հայրը նշմարէ այս լուսանշոյլ  
պայծառութիւնը :

ԱՆՍՈՒԻՍՄԱ : Պիտի կարծէ թէ լուսինն է որ ժամ մը  
յառաջ կը ծագի վիճուկի մը մոգական երգերէն հրապուրեալ :

ԱՆՍԱՆ : Կուգան , ահաւասիկ . . . Ազարիէ՛լ :

ԱՆՍՈՒԻՍՄԱ : Վաղենք , դիմաւորենք զիրենք . ո՛հ , ի՞նչու  
թեւեր չունիմ Սամիասայի գիրկը թուելու համար :

ԱՆՍԱՆ : Տէ՛ս . . . իրենց ներկայութիւնը բոլոր արեւ-  
մուտքն լուսարբոբք կը պայծառացնէ իբրու թէ արեգակն  
երկրորդ անգամ մայրը մտնէր . . . տես . . . Արարատայ  
երկնածայր գաղաթին վրայ ակնախտիղ և երփներանդ  
աղեղ մը կը փայլի , իբրեւ իրենց քայլերուն հետքը . բայց ,  
նայէ՛ , խաւարը վերստին պատեց լեռան կատարը . . . և լոյսն  
անհետացաւ , այն փրփուրին նման զոր , Լեվիադան կը ժայթ-  
քեցնէ , երբ դուրս կ'ելնէ իւր անդնդախոր օթեւանէն  
կոհակաց խաղաղ ծոցին վրայ զբօսնելու համար , և որ իս-  
կոյն կը ցնդի և կ'անհետանայ երբ ծովուց հսկայն վերստին  
կը խորասուզի անդնդոց մէջ , մինչեւ այն վայրերն՝ ուր  
Ովկիանու աղբիւրքը կը ննջեն :

ԱՆՍՈՒԻՍՄԱ : Յերկիր իջան , Սամիաս :

ԱՆՍԱՆ : Ի՛մն Ազարիէ՛լ : (կը հեռանան) .

**ՏԵՍԻԼ Բ .**

**ԻՐԱՏ ԵՒ ՅԱՐԵԹ**

ԻՐԱՏ : Մի՛ յուսահատիր : Ի՞նչու այսպէս կը թափառիս .  
քու լուրթիւնդ կը յաւելուս գիշերուան լուրթեան վրայ  
և արտասուալից աչերդ կը բարձրացնես զէպ յաստղերն :  
Անոնք չեն կրնար օգնութեան գալ քեզ :

ՅԱՐԵԹ : Բայց զանոնք դիտելով իմ վշտերս կ'ամբօքին  
. . . թերևս , ո՞ գիտէ , այս պահուն նոս ալ ակնկառոյց

զանոնք կը դիտէ ինձ պէս . ինձ այնպէս կը թուի թէ  
գեղեցիկ առարկայ մ'աւելի ևս կը գեղեցկանայ երբ իւր  
հայեցողածքներն կը յառին անմահ իրաց յաւիտենական  
գեղեցիկութեան վրայ : Անա՛հ :

ԻՐԱՏ : Բայց նա չ'սիրեր գըեղ :

ՅԱՐԵԹ : Աւա՛ղ :

ԻՐԱՏ : Եւ սէգն Ահօլիբամա կ'արհամարհէ զիս նոյնպէս :

ՅԱՐԵԹ : Կը ցաւիմ և քո վրայ :

ԻՐԱՏ : Թո՛ղ չարունակէ իւր գոռողութիւնը , ես ալ իմ  
հպարտութիւնս ունիմ որով պիտի կրնամ իւր արհամարհա-  
նաց հանդուրժել . թերևս ժամանակն վրէժխնդիր ըլլայ ինձ :

ՅԱՐԵԹ : Այդպիսի խորհուրդ մը կրնամ քեզ ուրախու-  
թիւն պատճառել :

ԻՐԱՏ : Ո՛չ ուրախութիւն և ո՛չ ցաւ . կը սիրէի դնա , և  
առաւել ևս պիտի սիրէի եթէ փոխադարձաբար սիրէր և  
նա զիս . . . : Բայց հիմայ կը թողում զինքն աւելի գե-  
ղանահ ճակատագրաց , եթէ իրեն այնպէս կը թուին :

ՅԱՐԵԹ : Ի՞նչ ճակատագիր :

ԻՐԱՏ : Պատճառ ունիմ կարծելու թէ նա ուրիշ մը կը սիրէ :

ՅԱՐԵԹ : Անա՞հ :

ԻՐԱՏ : Ո՛չ , իւր քոյրը :

ՅԱՐԵԹ : Եւ ուրիշ գո՞վ :

ԻՐԱՏ : Այդ չեմ գիտեր . բայց իւր կերպարանքը , եթէ  
ոչ իւր խօսքերը , ինձ այնպէս կարծել կուտան թէ ու-  
րիշ մը կը սիրէ նա :

ՅԱՐԵԹ : Այո՛ , բայց Անահ այնպէս չէ . նա միայն իւր  
Աստուածը կը սիրէ :

ԻՐԱՏ : Ո՛վ որ ալ ըլլայ իւր սիրածը , եթէ դու չես , ի՞նչ  
օգուտ քեզ :

ՅԱՐԵԹ : Ոչ ինչ , ստուգիւ , բայց կը սիրեմ :

ԻՐԱՏ : Ես ալ կը սիրէի :

ՅԱՐԵԹ : Եւ հիմայ որ ալ չես սիրեր , և կամ չսիրել կը  
կարծես , ըսէ՛ ինձ , աւելի՞ երջանիկ ես :

ԻՐԱՏ : Այո՛ :

ՅԱՐԵԹ : Կը ցաւիմ քու վրայ :

ԻՐԱՏ : Ի՞մ վրաս , և ինչո՞ւ :

ՅԱՐԵԹ : Վասն զի երջանիկ ես դու զրկուած ըլլալով  
քու սիրոյդ առարկայէն , մինչդեռ նոյն այդ զրկումն իմ  
թշուառութեանս պատճառ եղած է :

ԻՐԱՏ : Այդ դառն ու ցաւազին խօսքերդ հիւանդ մը-  
տացդ արդիւնքը կը համարիմ , և չէի ուզեր քեզ նման  
զգալ , թէպէտ և փոխարէն ընդունէի այնքան ոսկի որքան  
չեն կրնար արժեւեր հարց հօտերն՝ եթէ փոխանակենք  
զանոնք կայէնի որդուց մետաղին հետ , այն գեղին փուռոյն՝  
զոր իբրև արժէք ունեցող բան մը կը ջանան ընդունելու  
մեզ , իբրև թէ անօգուտ փոշին , երկրին այդ միւրը ,  
կարենար արժել այն կաթը , բուրդը , պտուղներն , և այն  
ամեն բան զոր մեր հօտերը և մեր անդաստանք ի՛րնձե-  
ռեն մեզ : Գնա՛ , Յարեթ , դնա՛ հառաչել աստեղաց առջև ,  
ինչպէս դայլերը կ'ոռնան լուսնին դիմաց . . . ես կը դառ-  
նամ իմ հանգիստս վայելելու :

ՅԱՐԵԹ : Ես ալ քու օրինակիդ պիտի հետեւէի , եթէ  
կարելի ըլլար ինձ : . . .

ԻՐԱՏ : Չ'պիտի դաս ուրեմն մեր վրանը :

ՅԱՐԵԹ : Ո՛չ , իրատ , ես կերթամ այն այրը՝ որ հաղոր-  
դակցութիւն ունի , կ'ըսեն , ստորերկրեայ աշխարհին հետ ,  
և ուսկից դուրս կ'ելնեն դեռնաբնակ ողիներն , երբ երկ-  
րի վրայ գան թափառիլ :

ԻՐԱՏ : Եւ ի՞նչ ընելու պիտի երթաս հոն :

ՅԱՐԵԹ : Այն տեղւոյն մի՞ն տխրութեան մէջ փոփոխնք  
մը փնտռելու իմ վշտացս . . . այդ թաղծանաց նախաստուեր  
կայանը խիտ յարմար է վշտահար և յուսահատ սրտիս :

ԻՐԱՏ : Բայց նաև խիտ վտանգաւոր . օտարոտի տեսիլ-  
ներ կամ անհեղաձայն աղմուկներ արհաւրօք լցած են այն  
տեղն : Կուզեմ ընկերանալ քեզ :

ՅԱՐԵԹ : Ո՛չ իրատ , հաւատա՛ ինձ , բնաւ գէշ խորհուրդ  
մը չունիմ , և բնաւ չարիք մը մի՛ կասկածիր :

ԻՐԱՏ : Բայց ո՛րքան բարի ես դու , այնքան չար ողիք  
թշնամի են քեզ . դարձուր քայլերդ ուրիշ կողմ , կամ  
թո՛ղ որ հետդ դամ :

ՅԱՔԵԹ : Ո՛չ , ո՛չ , իրատ : Միայնակ կ'ուզեմ երթալ :  
ԻՐԱՍ : Ուրեմն խաղաղութիւնն հետդ ըլլայ : (Իրատ դուրս  
կ'ելնէ) .

ՅԱՔԵԹ (Միակ) Խաղաղութիւն , ես փնտուցի զայն հոն՝  
ուր ըլլալ պէտք էր ,—սիրոյ մէջ . . . և խնդրեցի զայն այն-  
պիսի սիրով մը որ թերևս արժանի էր անոր , և փոխարէն  
ի՞նչ ստացայ ,—վշտահար սիրտ մը , վշտառեալ ողի մը , օրեր  
մշտախուով տագնապներով լի , և անքուն դիչերներ : Խա-  
ղաղութիւն , և ի՞նչ խաղաղութիւն , յուսահատութեան  
հանդարտութիւնը , անկոխ անտառաց ընթացիւնը՝ զոր ի-  
րենց հեծեծագին օստոց վրայ վազող մըրկին մոնջիւնը  
միայն կ'ընդհատէ . . . այս է իմ վշտաբեկ հոգւոյս սգառը-  
խուր և մշտայոյզ վիճակն : Երկիրն ապականեցաւ . բազմա-  
թիւ նշաններ կը յայտնեն թէ փոփոխութիւն մը կը մօտե-  
նայ և թէ մօտալուտ աղէտ մը կ'սպառնայ կորստական  
էակաց : Ո՛վ սիրելիդ Անահ , մահադուշակ ժամուն անդըն-  
դոյն աղբիւրները բացած ատեն՝ պիտի կրնայիր այս սրտիս  
վրայ ապաստանարան մը գտնել , տարերաց կատաղութեան  
դէմ պիտի կրնար սաշտապանել զքեզ այս սիրտս որ ի դուր  
բարբախեց քեզ համար , և որ այն ատեն աւելի ընդունայն  
պիտի բարախէ , երբ քուկդ . . . : Ո՛վ Աստուած , դէթ քու  
ցասունդ խնայէ՛ Անահի , վասն զի մեղաւորաց մէջ ան-  
րիժ է նա , իբրև աստղ մը ամպոց մէջ՝ որք վայրիկ մի կը  
նսեմեն զայն առանց խաղառ մարելու : Իմն Անահ , ի՞նչպէս  
զքեզ պիտի պաշտէի . բայց մերժեցիր դու զիս . . . և սա-  
կայն կուզէի փրկել զքեզ .—կուզէի որ ասրիս դու երբ  
ովկիանոսը բովանդակ երկրին շիրիմը պիտի ըլլայ , և լէ-  
վիադան՝ անեղր ծովուց և ալեսոյզ տիեզերաց հրամանա-  
տար , իրեն դէմ կանգնող ժայռ մը չ'գտնելով իւր պետու-  
թեան անսահման տարածութեանը վրայ պիտի զարմանայ :  
(Յարեթ կը հեռանայ) :



ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅ , ՍԵՄ

ՆՈՅ : Ո՛ւր է քու Յարեթ եղբայրդ :  
ՍԵՄ : Դուրս երաւ՝ ըսելով թէ ըստ իւր սովորութեան  
իրատը գտնելու կ'երթայ . բայց կը վախնամ թէ դէպ ի Ս .  
նահի վրանները գացած ըլլայ , որոց բոլորտիքը կը թափա-  
ռի ամեն դիչեր՝ իւր աւերեալ բոյնին շուրջը թռչտող ա-  
ղաւնոյ մը նման , կամ թերեւս դէպ այն քարանձաւը գո-  
ցած ըլլայ որ Արարատայ կողմը վրայ կը բացուի :

ՆՈՅ : Ի՞նչ կ'ընէ հոն . աղետալի վայր մ'է այն այս երկ-  
րին վրայ ուր արդէն ամեն բան չար է . վասնզի մեղա-  
գործ մարդոցմէ աւելի չարագոյն էակներ հոն կը ժողովին :  
Յարեթ կը սիրէ տակաւին անիծեալ ցեղին այն աղջիկը ,  
որու հետ կտրելի չէ իրեն ամուսնանալ , եթէ նոյն խի  
սիրուի անկէ : Ո՛չ , դժբախտ սիրտ մարդկան , իմ արիւնէս  
սերած զնակ մը , որ ժամանակաց եղեռուներն ու ճակա-  
տագիրը կը ճանչէ և գիտէ թէ վրէժխնդիր ժամը կը մօ-  
տի , ի՞նչպէս կրնայ այս աններելի դգացմանց անձնատուր  
ըլլալ : Առաջնորդէ՛ ինձ , պէտք է գտնել զայն :

ՍԵՄ : Աւելի հեռուն մի երթար , հայր իմ , ես կը փըն-  
տըռեմ Յարեթը :

ՆՈՅ : Ինձ համար մի վախնար բնաւ . չարին բովանդակ  
հանձարը անգոր է Եհօփայէն ընտրեալ մարդուն դէմ . . . Օ՛ն :

ՍԵՄ : Դէպ ՚ի երկու քերց հօր վրանները :

ՆՈՅ : Ո՛չ , դէպ ՚ի քարանձաւն : (Նոյ դուրս կ'ելնէ Սեմի  
հետ) .

ՏԵՍԻԼ Դ.

ԼԵՐԻՆՔ : —ԱՐԱՐԱՏ ԼԵՌԱՆ ԱՅՐԸ

ՅԱՔԵԹ (մինակ) : Ո՛վ դուք , վայրենատեսիլ վայրեր որ  
յաւիտենական կը թուիք , և դու՛ , այր , որոյ խորութիւնը  
ոչ ոք կարող է չափել , և դուք լերինք , որ այնպէս գե-  
ղատեսիլ և ձեր գեղեցկութեան մէջ այնքան սոսկալի էք ,  
ձեր քարածայոյց դաժան վեհութեամբը և այն հսկայածև

երկնաբերձ ծառերովն որոց արմատք դուրս կը ցցուին այն սեպածեւ ժայռերէն՝ ուր մահկանացու մը չհամարձակիր դընել իւր ոտքը եթէ կարենայ հասնիլ հոն : — Այո՛ . յաւիտենական կ'երեւիք . և սակայն մի քանի օրէն , դուցէ մի քանի ժամէն , ջուրց կատաղութեան առջեւ պիտի խլուիք ու տապալիք : Այս այրէն ներս , որ ստորերկրեայ աշխարհի մը դուռն ըլլալ կը թուի , քիչ ատենէն պիտի խուժեն մանչաձայն կոհակը , և դեղբիններ պիտի խաղան առիւծուց որջին մէջ : Իսկ մարդն . . . ո՛ մահկանացուք , ո՛ եղբարք իմ , ինձմէ վատ ո՞վ ձեր անհուն շիրմին վրայ պիտի ողբայ , ո՞վ կենդանի պիտի մնայ ձեր վրայ արտասուք թափելու համար : Բա՛րէ , միթէ ես քան զձեզ լաւագո՞յն եմ որ երկնասաստ ցատումը կը խնայէ ինձ : Ի՞նչ պիտի ըլլան այն հէշտաւէտ վայրերն՝ ուր Անահի վրայ խոկալ ու երազել կուգայի երբ կը յուսայի տակաւին , և այն վայրագ այլ ոչինչ նուազ ցանկալի օթեւմաններն՝ որոց իմ յուսակրտուր սրտիս հառաչներն կուգայի յանձնել : Միթէ կարելի՞ է , մե՛ծդ Աստուած , որ այս հպարտ սարը որոյ խրկնաձեմ կատարը հեռաւոր աստղի մը կը նմանի , յորձնեռանդն կոհակաց ներքեւ ընկուպի : Ի՞նչ . արեգական ըսկըքնածագ ճառագայթները չ'պիտի գան այլ ևս իւր գագաթէն ի բաց վանելու երերածուփ գոլորշիներն և փարատելու մէգն ու մառախուղը : Երեկոյին՝ չ'պիտի տեսնեմք ալ արևու բոցավառ գնտին իւր գոռոզ գլխուն ետին թաւալիւլը՝ նորա ճակտին վրայ լուսաճաճանչ սրակ մը թողլով : Ալ աշխարհի փարոսը չ'պիտի՞ ըլլայ նա , ուր հրեշտակները կուգային հանդչել իբրև աստեղց մերձաւորագոյն վայր մը : Կարելի՞ բան է որ «ոչնչութիւն» բառն իրեն և ամեն բանի համար արձակուած վճիռ մը ըլլայ բաց ի մեզմէ և այն անարգ արարածներէն՝ որք , ըստ հրամանի Տեառն , իմ հօրս ձեռքով մահուանէ պիտի ազատին : Այդ արարածներն՝ հայրս պիտի փրկէ զանոնք , և ես , չ'պիտի կրնամ երկրին աղջըկանց ամենէն չքնաղագեղը փրկել՝ զատապարտութենէ մը՝ որմէ թձն և իւր էգը պիտի խուսափին : Ղասն զի պիտի ապրին այդ դեռուններն իրենց սեռին սահպանութեան

և աճման համար , չչելու և խայթելու համար վերստին նոր աշխարհի մը մէջ՝ որ ծխաշունչ և տամուկ դուրս պիտի ելնէ այն կաւէն որ՝ միակ գերեզման այնքան անհամար էակաց՝ պիտի պատէ այս աշխարհի դիակը մինչև որ արեգական ջերմութեամբն աղտաղտուկ ճահիճն բնակելի հողագուռնտ մ'ըլլայ վերստին : Ո՛րքան մահուանք մէկ օրուան մէջ : Աշխարհ գեղեցիկ և առոյգ , այլ մերձ ՚ի կործանումնս , սըրտառուչ կը նայիմ ի քեզ՝ քու օրերդ և դիչերներդ համիւրով : Չեմ կարող զքեզ աղատել , չեմ կրնար խակ փրկել զայն որոյ սէրը զքեզ ալ աւելի սիրելի կրնար ընել իմ սրտիս : Բայց ես քու փոշուրդ մէկ մասն եմ , և չեմ կըրնար քու վերահաս կործանմանդ վրայ խորհիլ առանց . . . ո՞վ մե՛ծդ Աստուած . . . կրնա՞ս . . . (կ'ընհատէ խօսքը՝ բուռն հողմոց նման գոռում կը լուռի այրին մէջ , և յետոյ ծաղու քրքիջներ . . . ոգի մը դուրս կ'եկնէ )

ՅԱՐԵԹ : Յանուն բարձրելոյն ո՞վ ես դու :  
 ՈԳԻՆ , (ծիծաղով մը պատասխանելով) . Հա՛ , հա՛ , հա՛ :  
 ՅԱՐԵԹ : Յանուն երկնից տակ գտնուող ամեն սրբազան իրաց , խօսէ՛ :  
 ՈԳԻՆ (խնդալով) Հա՛ , հա՛ , հա՛ :  
 ՅԱՐԵԹ : Կերդուընցնեմ զքեզ ջրհեղեղին վրայ՝ որ կը մերձի , երկրին՝ զոր ընդ հուպ ովկիանոսը պիտի կլնէ , անդունդին՝ որ բոլոր իւր աղբիւրները պիտի բանայ , երկնից՝ որ իւր ամպերն յորդահոս հեղեղներու պիտի փոխէ , ամենակալ Էակին վրայ՝ որ կ'ստեղծէ և կ'աւերէ , ո՞վ դու , ուրուականդ անձանօթ և ահեղ , պատասխանէ ինձ . ինչու այդ ահարկու ծիծաղովը կը խնդաս :

ՈԳԻՆ : Ինչո՞ւ կուլաս :  
 ՅԱՐԵԹ : Երկրին և իւր բոլոր որդւոց համար :  
 ՈԳԻՆ : Հա՛ , հա՛ , հա՛ (Ոգին կ'աներեւութանայ )  
 ՅԱՐԵԹ : Ի՛նչպէս այս դեւը կը խնդայ մահկանացուաց տանջանաց և աշխարհի մտալուտ կործանման վրայ՝ որու վրայ արեգակը պիտի փայլի առանց տաքցնելու համար կեանք գտնելու հոն : Ի՛նչպէս երկիրը կը ննջէ , և բոլոր անոնք՝ զորս իւր ծոյցին մէջ կը պարուսնակէ , կը ննջեն իրեն

պէս՝ մահուան յաղթանակին այս նախընթաց գիշերոյն մէջ :  
ինչո՞ւ պիտի դարձնուն . . . Մահը դիմաւորելո՞ւ համար : Ի՞նչ  
կը տեսնեմ , ի՞նչ են ուրեմն սա մահուան նմանող և այս  
օրհասական աշխարհէն առաջ ծնած էակներու պէս խօ-  
սող առարկայները : Ար մօտենան ամպերու նման :

(Այլ և այլ ոգիներ կ'ենեն այրէն :)

Ո՞րի ՄԸ : Ուրախանանք , ատելի սերունդը՝ որ չկրցաւ  
Եդեմի մէջ իւր թագաւորութիւնը պահել և Վասիլկար գիտու-  
թեան ձայնին լսեց , իւր յետին ժամուն կը մօտի : Ո՛չ եթէ  
յամրաբար՝ մի առ մի պիտի սպառին , ո՛չ եթէ փառքը , վիշ-  
տը , տարիներն , սրտի անձկութիւնքն , ժամանակին հա-  
մայնաջինջ ընթացքը պիտի հնձեն զանոնք , ո՛չ : Ահա իրենց  
վերջին օրը . երկիրը Ովկիանոս մը պիտի ըլլայ , և կոհա-  
կաց անհունութեան վրայ հողմոց շունչէն զատ շունչ չպի-  
տի ըլլայ : Հրեշտակաց թևերն ՚ի զուր պիտի յոգնին հան-  
գըստեան տեղ մը փնտռելով . այս Զրեղէն շիրմին մէջէն  
բնաւ ժայռ մը իւր կատարը չպիտի բարձրացնէ , ապաւէն  
մ'ընծայելու համար յուսահատութեան , կամ ցոյց տալու  
այն տեղը՝ ուր փշեց նա իւր ոգին՝ անեղր ծովուն , վրայ  
վերջին հայեցումս մ'արձակելով , և ընդ վայր սպասելով  
որ տեղի տան կոհակք մոլեգին : Ամենուրեք դատար-  
կութիւն , և ամեն ուրեք կործանումն : Ուրիշ տարր մը կե-  
նաց թագաւորը պիտի ըլլայ , և փոշոյ նողկալի դաւա-  
կունք պիտի կորնչին բնաջինջ , և երկիրն ամեն գոյներէն  
միայն կապոյտ մը պիտի մնայ անսահման և միօրինակ , և  
ամեն ինչ պիտի փոխուի գեղատեսիլ լերանց և լայնատա-  
րած դաշտաց վրայ . մայրիք և շոճք ի զուր պիտի ամբառ-  
նան իրենց գագաթունքն : Ամեն բան պիտի ընկղմի ծովա-  
սոյգ այս տիեզերակտն ողողման մէջ . մարդն , երկիրը և  
հուրը պիտի մեռնին , երկինք և երկիր ա՛լ միմիայն անծայր  
և անկենդան միջոց մը պիտի ընծայեն յաւիտենականին  
աչաց : Ո՛վ պիտի կանգնէ բնակութիւն մը ալեաց փըր-  
փուրներուն վրայ : (Յարեթ կը յառաջանայ :)

ՅԱՐԵԹ : Ա՛վ . . . ի՞մ հայրս , երկիրն սերմը չպիտի կոր-  
տուի : . . . չարը միայն պիտի ջնջուի : Ի բաց աստի , դեք

չարանիւթք՝ որ մարդոց թշուառութեամբ կը յաղթանա-  
կէք և ձեր պժղալի խնդութիւնը կ'ոռնաք երբ Աստուած  
կը կործանէ ինչ որ դուք չէք համարձակիր ինքնին աւերել :  
Փութացէ՛ք ի փախուստ , դարձէ՛ք ձեր ստորերկրեայ ան-  
ձաներն , մինչև որ ալիքներն հալածեն զձեզ ալ ձեր գաղտ-  
նածածուկ սպաւէններուն մէջ , և ձեր աղիտարեր ցեղը ,  
անհունութեան մէջ տարագիր , ամեն հողմոց շուառական  
խաղալիքն ըլլայ :

Ո՞րի : Որդիդ ընտրելոյն , երբ դու և քուկիներդ հա-  
մայնակուլ և անեղ տարրն արհամարհէք , երբ անդնդոյն  
պատուարը խորտակի , միթէ դու և քուկիներդ բարի և  
երջանիկ պիտի ըլլաք . ո՛չ թշուառութիւնը նոր աշխար-  
հին և նոր սերնդեան բաժինը պիտի ըլլայ . — Պեր զաւակ-  
ներն իրենց դիմաց գեղեցկութիւնը պիտի կորսնցունեն ,  
և նուազ պիտի ապրին քան այն փառապանծ հսկայքն՝ որք  
այս երկիրն մէջ կը պտտին՝ պերճ և սիդաճեմ , քան այս  
երկրի կոյսերուն հետ երկնից տարփանքէն ծնած այս զա-  
ւակունքն , անցեալէն միայն արտասուք պիտի մնան ձեզ ,  
և չե՞ս ամենար քու եղբարցդ վրայ ապրելու , ուտելու , խը-  
մելու և ծնանելու : Անոնց մահուանէն յետոյ սիրտդ այն-  
չափ վատ և այնչափ անարի՛ է որ կարենաս այս համայ-  
նաջինջ կործանման գոյժն լսել՝ առանց ազնուական արի-  
ութեամբ մը քու եղբարցդ հետ մահը գրկելու , փոխանակ  
փրկութիւն խնդրելու հօրդ ապաստանարանին մէջ և քու  
բնակութիւնդ շինելու պետոյգ աշխարհին գերեզմանին  
վրայ : Ո՛վ կրնայ յանձն առնուլ ապրիլ իւր սեռին մահ-  
ուանէն յետոյ , եթէ ոչ վատ և կոյր հոգի մը : Իմ ցեղս  
կ'ատէ քուկդ , իբրև այլադդ . և թշնամի ցեղ մը . բայց  
մենք մեր ցեղը չեմք ատեր , և մեզմէ չկայ մէկը որ նա-  
խամեծար համարած չըլլայ երկնից մէջ թափուր թողուլ  
գահ մը՝ խաւարին մէջ մեզ բնակակից ըլլալու համար ,  
քան իւր բնկերներուն առանձին տառապիլը տեսնել : Գնա՛  
ապրէ՛ , թշուառական , գնա՛ կեանք տուր ուրիշ թշուառ-  
ներու . . . և , երբ համայնաւեր կոհակք իրենց գործած  
աւերակաց վրայ մընչեն , դու նախանձէ՛ անէացեալ հըս-

կայից վրայ , արհամարհէ քու հայրդ անոնցմէ յետոյ կենս  
դանի մնացած ըլլալուն համար , և դ՛ու իսկ ամէցիր իւր  
որդին ըլլալուդ : (Ոգեաց պարուն ձայնը դուրս կ'ելնէ այ-  
րէն :)

ՊՍՐ ՈԳԵԱՅ : Ուրախութիւն , մարդկային ձայնն այլ ևս  
չպիտի գայ օդոց մէջ մեր ցնծութիւնն ընդմիջելու իւր ա-  
ղօթիւքը . մարդիկ ա'լ չպիտի պաշտեն , և մենք , որ դարերէ  
իվեր դադրած եմք պաշտելէ Տէրը՝ որ աղօթք կը պահանջէ  
և որու համար զոհի մը մոռացումն ոճիրմ' է աններելի , պի-  
տի տեսնեմք անդնդոյն դառն աղբերց մօլեզին դուրս  
ժայթքելն և հեղեղելն յերկիր , պիտի տեսնեմք իրենց հո-  
ղազանգ գձուձ էութեան վրայ խրոխտապանծ արարածոց  
կորուստը , և իրենց ձերմկած ոսկրտիքը ցիրցան սիւրբ-  
ւած անձաներու , հեղեղատներու , և լերանց փապարնե-  
րուն մէջ , ուր անձողարելի տարրը պիտի հալածէ զիրենք  
անողբարար : Կենդանիներն իսկ , իրենց անյուսութեան  
մէջ , պիտի դադրին մարդոյն դէմ պատերազմելէ և զիր-  
եար դիշատելէ , և վազը իւր ոգին պիտի փչէ դառնու-  
կին քով , իբրու թէ միևնոյն կաթը ծծած ըլլար . . . մին-  
չև որ ամեն բան , իբաց առեալ երկինքը , այնպէս ըլլայ ,  
ինչպէս էր ստեղծումէն յառաջ , լուին և անդոյ : Մահը  
պիտի հաճի միայն խնայել նախկին արարչութեան մի քա-  
նի անզոր բեկորներուն , այս պայմանաւ որ նոր ազգեր  
յառաջ բերեն ի ճարակ իւր անյազ որկորոյն : Այս բեկոր-  
ները , ջրհեղեղին ալեաց վրայ պիտի ծփան , և երբ տեղի  
տան ջուրը և արեգակն տասն ջեռուցանէ և պնդէ ծը-  
խաշունչ ու ջրողով գետինը , այն ատեն ծնունդ պիտի  
տան նոր էակաց և այն ատեն պիտի գան դարձեալ տարի-  
ներն . . . հիւանդութիւնք . . . վիշտք . . . ոճիրք . . . ի-  
րենց հետ ունենալով իւրեանց անմեկին արբանեակներն՝  
տաղնապքն ու ատելութիւնքը , մինչև այն օրն՝ ուր . . .

ՅԱՒԵԹ : (զայն ընդմիջելով) . Ուր յաւիտենական կամքը  
պիտի հաճի մեկնել բարեաց և չարեաց այս երազը , կոչել  
առ ինքն բոլոր ժամանակներն և իրերը , ժողովել զանոնք  
իւր մեծազոր թևոց առկ , խապաւ կործանել զք. ժողոս . . .

և վերածնեալ երկրին տալով վերստին իւր նախկին գե-  
ղեցկութիւնը , դարձնել անոր իւր Եդեմը անվախճան դը-  
րախտի մը մէջ , ուր մարդն ա'լ չպիտի լինայ , և ուր դեք  
իսկ պիտի ծառայեն արդարոյն :

ՈԳԻՆԵՐԸ : Եւ ե՞րբ պիտի կատարուի այս սքանչելի մար-  
դարէութիւնը :

ՅԱՒԵԹ : Երբ փրկիչը գայ , նախ իւր տառապանաց , և  
յետոյ իւր փառաց մէջ :

ՈԳԻ ՄԸ : Մինչև այն ատեն՝ կուուեցէ՛ք ձեր մահակուռ  
չլթայից հետ մինչև որ երկիրը ծերանայ : Շարունակեցէ՛ք  
ձեր ընդունայն պատերազմը ձեզ դէմ , երկնից և դժո-  
խոց դէմ , մինչև որ ամպերը շառագոյն ներկուին պատե-  
րազմի դաշտաց արեան ճապաղիններէն բուրեալ չոգիներովն :  
Պիտի ըլլան նոր ժամանակք , նոր կլիմաներ , նոր արուեստք )  
նոր մարդիկ . բայց միշտ հին ոճիրները , նախկին արտա-  
սուք և վաղեմի չարիք յարատև պիտի մնան ձեր մէջ այլ  
և այլ կերպարանաց տակ : Միևնոյն բարոյական մրրիկնե-  
րը զապագայն ծովամոյն պիտի ընկզմեն , ինչպէս որ մի  
քանի ժամէն ալիք փառապանծ հսկայից շիրիմները պիտի  
կլենն :

ՊՍՐ ՈԳԵԱՅ : ԵՂբարք , ուրախանա՛նք . մահկանացու ,  
մնա՛ բարեաւ . ո՛ւնկն դիք , ո՛ւնկն դիք , լսելի կ'ըլլայ ար-  
դէն ովկիանոսին հեռուոր և չարագոյժ ձայնը որ կ'ուռի  
և կ'մռնչէ . հողմերն արդէն իրենց սրաթուիչ թևերը կը  
չարժեն . ամպոց շտեմարանք լի են հեղեղներով , անդուն-  
դէն իւր աղբիւրները և երկինք իւր սահանքը պիտի բանայ  
ընդ հուպ , և սակայն մարդիկ անպիտիք և անտարբեր կը  
տեսնեն այս մահազուշակ նշաններն . . . և իրենց աչերը  
կոյր են տակաւին . չեն կարող լսել այն ձայները զորս մեք  
կը լսեմք . որոտմանց և շանթից սպառնալից բանակը կը  
գումարի ամպոց մէջ . արդէն իսկ դրօշք կը փայլին , այլ  
չեն պարզուած տակաւին , և ոգեաց կորովարիւր հայեց-  
ւածքը միայն կրնայ նշմարել զանոնք : Հեծէ՛ , հեծէ՛ , ո՛վ  
երկիր , տակաւին առոյգ , դու այնքան մօտ ես քու քե-  
րեզմանիդ որքան օրօրոցիդ . դողացէ՛ք լերինք , որ ընդ



հուպ պիտի անհետիք ալեաց խուժանին տակ . ձեր քարա-  
 ժայռից երկնակարկառ բարձունքէն աւելի վեր պիտի բար-  
 ճրանայ ջրամած լերանց կատարը , և ուկիխանու խեցեմորթք  
 հոն պիտի դան կանգ առնուլ ուր հիմայ արծուոյն ընտա-  
 նիքը կը ննջէ . . . . Ո՛հ , ի՛նչ ճիշեր պիտի արձակէ անու-  
 ղորմ ծովուն վրայ թեւածելով : Ի զուր պիտի կոչէ իւր  
 մատաղ ձաղերը . ալիք միայն պատասխան պիտի տան ի-  
 րեն : Իղուր նաև մարդն անոր լայնաբաց թեւոցը պիտի  
 նախանձի , որք չ'պիտի կրնան փրկել զայն . . . ո՛ւր պիտի  
 կրնայ հանգչիլ նա երբ անհուն միջոցը իւր աչաց՝ ովկէան  
 մը միայն ընծայէ :

Եղբարք , ուրախանա՛նք , բարձրացնե՛նք մեր վեհ ճայնե-  
 րը . . . : Սմեն բան պիտի մեռնի , ի բաց առեալ Սեթի սե-  
 րնդեան մի տկար բեկորը . . . Սեթի սերնդեան՝ որ պիտի  
 ազատի մահուանէ , դարուց և ժամանակաց մէջ վիշտը մը-  
 տընջենաւորելու համար . . . բայց կայէնի որդիներէն ոչ ոք  
 պիտի մնայ , և իւր բոլոր հրաշագեղ աղջկունք զոհ պիտի  
 ըլլան սատակիչ տարեր . կամ ալեծուփ , հերարձակ , հա-  
 մատարած ծովուն մկանանց վրայ պիտի անիծեն երկնից  
 անդթութիւնը , որ չլինայեց մինչև իսկ մահուան մէջ այն-  
 քան գեղեցիկ արարածներու :

Վճիռը տրուած է , ամենքն պիտի կորսուին , և մարդ-  
 կան տիեզերական ժխորին տիեզերական լուծթիւն մը պիտի  
 յաջորդէ . փախչինք , ե՛ղբարք , փախչինք , բայց ուրախա-  
 նա՛նք : Մենք ինկանք , և ահա մարդն ևս կ'լինայ : Կորսուին  
 երկնից բոլոր այս թշնամիներն՝ որք յետս կ'ընկրկին դժոխոց  
 առջև (Ողիները կ'աներեւութանան) :

ՅԱՌԵԹ (առանձին) : Աստուած երկրին դատակնիքն յայ-  
 տարարեց , փրկութեան տապանն ազգարար նշանն է անոր  
 և դե.ք իսկ իրենց անձաւաց խորէն զայն կ'աղաղակեն : Ե-  
 նովքի դիրքը , երկար ժամանակէ իվեր կանխազուշակած  
 է զայն այն համր թերթերուն մէջ , որոց լուծթիւնը աւե-  
 լի բարձրաձայն կը խօսի մտաց , քան կայծակը ականջին .  
 և սակայն մարդիկ անբող եղան իւր ձայնին , և կոյր զկու-  
 րայն կը քայլեն դէպ 'ի իրենց աղէտալի ճակատադէրը , որ

թէպէտ վերահաս՝ չյուզեր սակայն իրենց կոյր անհաւա-  
 տութիւնը , ինչպէս որ իրենց վերջին աղաղակներն չպիտի  
 շարժեն ի գուժ Աստուածային վրէժխնդրութիւնը կամ ով-  
 կիանոսը որ անոր հլու պաշտօնեայն պիտի ըլլայ : Գեռ և  
 ոչ մէկ նշան մը կ'երեւի ողոց մէջ . ամպերը տակաւին դոյզն  
 ու ցանցառ են , և իրենց սովորական երևոյթն ունին . արե-  
 դակը պիտի ծագէ երկրին վերջին օրուան վրայ՝ ինչպէս  
 ծագեց արարչութեան չորրորդ օրն , երբ Աստուած հը-  
 րամայեց իրեն շողալ , և արեդակը իւր առաջին արշալոյսը  
 ծագեց . այն ատեն իւր նորաստեղծ լոյսը չլուսաւորեց  
 մարդկային սեռին հայրը , վասն զի չկայր նա տակաւին —  
 Բայց , մարդկային ձայնէն յառաջ նորա ճառագայթքն զար-  
 թուցին թռչնոց քողքրաձայն ալէլուներն , որք երկնից հաս-  
 տատութեան մէջ հրեշտակաց նման կը թռչին և անոնց պէս  
 կ'ողջունեն զերկինս ամեն օր Ադամայ որդիներէն յառաջ . .  
 ահա՛ իրենց առաւօտային օրհներգութեանց ժամը կը մօ-  
 տենայ . . . արդէն արեւիք կը բոցավառի , հիմայ պիտի  
 երգեն , և տիւը պիտի ծագի . . . գուցէ վերջին անգամ  
 . . . ընդ հուպ թռչնոց յողնած թեւերն պիտի լքանին ան-  
 զօր՝ ալեաց վրայ , և օրը մի քանի վաղանցիկ արշալոյսնե-  
 րէ յետոյ , ո՛հ , այս՛ պիտի ծագի օրը տակաւին . . . բայց  
 ի՛նչ բանի վրայ , քասօի մը վրայ , նման անոր որ լուսոյ  
 ստեղծումէն յառաջ զամեն ինչ կը պատէր , և որ վերստին  
 գալով պիտի ոչնչացնէ ժամանակը , որովհետև առանց կե-  
 նաց ի՛նչ են ժամերը , նոյնն են փոշոյն համար ինչ որ է  
 յաւիտեականութիւնը Եհովայի համար որ ժամանակը և  
 յաւիտեականութիւնն ստեղծեց : Առանց անոր , յաւի-  
 տեականութիւնն իսկ դատարկութիւն մը կ'ըլլար . ա-  
 ռանց մարդոյն՝ կը մեռնի ժամանակը , և կ'ընկղմի այն ա-  
 նըսկիզբն ովկէանին մէջ , ինչպէս որ մարդկային ցեղը ճա-  
 րակ պիտի ըլլայ այն ովկէանսին որ կուլ պիտի տայ նորա-  
 ծին աշխարհը :

Ի՛նչ կը տեսնեմ . երկրի զաւակունք և օղոց որդիներ ,  
 ո՛չ . . . ամենքն ալ երկնից որդիներն են . այնքան գեղեցիկ  
 են : Չեմ կրնար որոշել իրենց դիմաց գիծերը . բայց ինչ

1001  
1961

սս

պէս շնորհալից կերպով կ'իջնեն լերան զառիվայրէն , և լուսաւոր ճամբայ մը կը բանան զայն սլառող միդոյն մէջէն . յետ այն ժանտատեսիլ ոգեաց , որոց դժօխային անմահութիւնը իրենց յաղթանակին ամպարիչտ երգը հնչեցոյց , այս արարածոց ներկայութիւնը քաղցր է սրտիս , իբրեւ Եդեմական տեսիլ մը : Թերևս կուգան մի քանի օրերու թոյլտուութեան հրամանը բերելու՝ զոր իմ աղօթքներս այնքան անգամ խնդրեցին . . . Ահա՛ եկան :

Անահն է , ո՛վ Աստուած , և անոր հետ , (Սամիազա և Ազարիէլ կ'երեւին Անահի և Ահօլիբամահի հետ) .

ԱՆԱՀ : Յարե՛թ .

ՍԱՄԻԱԶԱ : Ի՞նչ , Ադամայ որդի՛ մը :

ԱԶԱՐԻԷԼ : Ի՞նչ կ'ընէ հոս երկրին զաւակը՝ մինչդեռ իւր բոլոր ցեղը կը ննջէ :

ՅԱՐԵԹ : Հրեշտակ , ի՞նչ կ'ընենք երկրի վրայ , մինչդեռ դու երկնից մէջ ըլլալ պէտք էիր :

ԱԶԱՐԻԷԼ : Կ'անդիտանա՞ս կամ կը մոռնա՞ս որ մեր պաշտօններէն մին է նաև երկրին պահապանն ըլլալ :

ՅԱՐԵԹ : Բայց բոլոր բարի հրեշտակներն դատապարտեալ երկրէն իրաց գացին . չար ոգիներն իսկ վախուստ կուտան մտալուտ քօսէն : Անահ՛ , Անահ՛ , դու զոր այնքան ընդ երկար և այնքան յանօգուտս սիրեցի , և զոր կը սիրեմ տակաւին , ինչո՞ւ համար կը պտտիս այս ոգւոյն հետ , այս պահուս ուր բնաւ բարի ոգի մը չկրնար յամել երկրի վրայ :

ԱՆԱՀ : Յարե՛թ չեմ կարող քեզ պատասխանել , սակայն ներէ ինձ . . .

ՅԱՐԵԹ . Իցի՛ւ երկինք՝ որ ընդ հուսւ ա՛լ չպիտի ներէ՛քեզ . վասն զի վտանգաւոր փորձութեան մը մատնուած ես :

ԱՀՕԼԻԲԱՄԱ : Դարձի՛ր քու եղբարցդ քով , յանդուգն որդիդ Նոյն . մենք զքեզ չեմք ճանչեր :

ՅԱՐԵԹ : Պիտի գայ թերևս այնպիսի ժամ մը ուր դու զիս լաւ ևս պիտի ճանչնաս , և ուր քու քոյրդ զիս նոյնը պիտի գտնէ ինչ որ եղած եմ միշտ :

ՍԱՄԻԱԶԱ : Որդի՛դ նահապետին , որ միշտ իւր Աստու-

Գրէ

ծոյն առջև արդար դտնուեցաւ , ի՞նչ որ ալ ըլլան քու վշտերդ (և քու խօսքերդ խառն են ցաւօք և ցասամբ) Ազարիէլ կամ ես ի՞նչ կերպով զքեզ թնամանեցինք :

ՅԱՐԵԹ : Թնամանք . թնամանաց ամենէն մեծն ըրիք ինձ , բայց դու իրաւունք ունիս , թէպէտ և երկրին աղջիկն է նա , սակայն արժանի չէի անոր , և չէի կրնար ըլլալ : Մնա՛ս բարեաւ , Անահ . այնքան յաճախ կրկնած եմ այս բաւը . բայց այսօր վերջին անգամ կ'ըսեմ զայն : Հրեշտակ կամ ով որ ըլլաս , կարողութիւն ունի՞ս փրկելու այս գեղուհին . . . Կայէ՞նի այս երկու գեղեցիկ աղջիկները :

ԱԶԱՐԻԷԼ : Զանոնք փրկե՛լ և ի՞նչ բանէ :

ՅԱՐԵԹ : Եւ կարելի՞ է որ դուք իսկ չգիտնաք զայն : Հրեշտակք , հրեշտակք , դուք մասնակից եղաք մարդոյն մեղաց , և դուցէ իւր պատժոյն ալ պիտի մասնակցիք , կամ դոնէ իմ մորմոքաննացս :

ՍԱՄԻԱԶԱ : Ի՞նչ մորմոք . այս առաջին անգամն է որ ադամեան զաւակի մը ինձ հետ առեղծուածով խօսիլը կը լսեմ :

ՅԱՐԵԹ : Եւ Բարձրեալը չբացատրե՞ց զանոնք : Ուրե՛մն . . . դուք ևս կորուսեալ էք . . . կորուսեալ անոնց նման :

ԱՀՕԼԻԲԱՄԱ : Լա՛ւ ուրեմն , թո՛ղ ըլլայ , եթէ կը սիրեն ինչպէս կը սիրուին , չպիտի վախնան մահացուաց բախտակից ըլլալէ . ինչպէս որ ես , եթէ հարկ ըլլար , չպիտի վարանէի անվախճան տառապանաց մէջ Սամիազայի վշտակից ըլլալու :

ԱՆԱՀ : Քո՛յր իմ , քո՛յր իմ , այդպէս մի՛ խօսիր :

ԱԶԱՐԻԷԼ : Կը վախնա՞ս , Անահ :

ԱՆԱՀ : Այո՛ , քեզ համար , յօժարակամ կը զոհէի կարճատև կենացս բոլոր մնացորդն՝ քու յաւիտենականութեանդ վշտաց միտիայն մէկ ժամ մը խնայելու համար :

ՅԱՐԵԹ : Անոր համար , այո՛ , Սէրովբէին համար թողուցիր զիս . . . բան մը չէ այս , եթէ նաև քու Աստուածդ ալ չլքիր : Վասնզի մահկանացու աղջկան մը և անմահի մը մէջ այսպիսի միութիւններ չեն կրնար երջանիկ ըլլալ և ո՛չ իսկ սուրբ : Մենք երկիր խրկուած ենք աշխատելու

և մեռնելու համար . . . և անոնք՝ ստեղծուեցան երկնից մէջ Ստտուծոյ ծառայելու համար , բայց եթէ նա կրնայ զքեզ փրկել , ընդ հուպ պիտի հասնի այն ժամը ուր մարդիկ երկնային օգնութեան միայն պիտի կրնան ապաւինիլ :

ԱՆՍԱՀ : Ո՛հ , մահուան վրայ կը խօսի :

ՍԱՄԻՍՁԱ : Մեզ հետ մահուան վրայ խօսիլ , և անոնց՝ որք մեզ հետ են . եթէ կարի վշտահար չերևէր , պիտի ժպտէի :

ՅԱՔԵԹ : Ինձ համար չէ որ կը վախնամ և կը ցաւիմ : Պիտի խնայէ ինձ երկնասաստ բարկութիւնը , ո՛չ թէ իմ արժանեացս համար , այլ արդար հօր մը՝ որուն առաքինութիւնը բաւական եղաւ իւր որդիներն իսկ փրկելու : Ի՞նչու չկրնար աւելի հեռուն տարածել իւր փրկելու կարողութիւնը . ինչո՞ւ չեմ կրնար գէթ իմ կեանքս զոհել այն կեանքին փոխարէն որ միայն կրնար երջանիկ ընել զիմս . . . այն ատեն Անահ , կայէնի դատերց վերջինն ու սիրելագոյնը , պիտի կրնար ընդունուիլ այն տապանին մէջ որ Մէթի սերնդեան բեկորները պիտի ընդունի :

ԱՀՈԼԻԲԱՄԱ : Եւ կը կարծե՞ս որ մենք , որ մեր երակաց մէջ կայէնի արիւնը կը կրեմք , Ադամայ անդրանիկ որդւոյն՝ կայէնի՛ զոր իւր մայրն Եդեմին մէջ յղացաւ , — յանձն առնուիք խառնուիլ Մէթի որդւոց հետ , Մէթի՛ Ադամայ ծերութեան վերջին պտղոյն : Ո՛չ , ո՛չ , նոյն իսկ եթէ բովանդակ աշխարհի փրկութիւնն աստի կախումն ունենար , եթէ երկիր ողջոյն կորստեան վճին եզրն հասած ըլլար . . . մեր ցեղը քուկինէդ բաժանեալ ապրեցաւ սկզբանէ ի վեր . . . և յաւէտ այսպէս պիտի ապրի . . . :

ՅԱՔԵԹ : Ես քեզ հետ չէի խօսեր , Ահօլիբամա , այո՛ , չափազանց հաղորդած է քեզ իւր հարարտ արեանէն այդ մարդըն՝ զոր այդքան կը պանծացնես , այն՝ որ առաջին արիւնը թափեց , և եղբօ՛ր մ'արիւնը : Բայց դու , Անահդ իմ , թո՛ղ ինձ այսպէս զքեզ կոչել . թէպէտ դու իմ չես , չեմ կարող հրաժարիլ այս անունը քեզ տալէ , թէպէտ և հարկ է զքեզ թողուլ : Ի՛մս Անահ , դու որ ինձ կարծել կուտաս եւ զքեզ թողուլ : Ի՛մս Անահ , դու որ ինձ կարծել կուտաս թէ Աբել աղջիկ մը թողած է , որուն բարեպաշտ և ան-

բիժ ցեղն կ'ապրի ի քեզ . այնքան դու կը տարբերիս քու քաղցրութեամբդ կայէնի միւս աղջիկներէն , եթէ ոչ գեղեցկութեամբդ , քանզի ամենքն ալ ակնահաճոյ անսիւ մ'ունին . . . :

ԱՀՈԼԻԲԱՄԱ , (զայն ընդմիջելով) Եւ կ'ուզէիր որ նա իմ հօրս թշնամոնն նմանէր հոգւով և մարմնով . եթէ այնպիսի գաղափար մ'ունենայի , եթէ կասկածէի թէ բան մը կայ Աբելէն անոր վրայ . . . — Ե՛տ քաշուէ , որդիդ Նոյլ , դու թշնամութիւն կը գրգռես :

ՅԱՔԵԹ : Զայդ քու հայրդ ըբօւ , դո՛ւստրդ կայէնի :

ԱՀՈԼԻԲԱՄԱ : Բայց նա չսպաննեց զՍէ՛թ . և իւր Ստտուծոյն և իւր մէջ տեղը մնացած գործերուն ի՞նչ ունիս ըսելիք :

ՅԱՔԵԹ : Ճշմարիտ կը խօսիս . իւր Ատտուածն զնա դատեց , և ես չպիտի յիշէի իւր ոճիրը , եթէ անով պանծալ և ուրանալ չթուէիր իւր գործած եղեռնը :

ԱՀՈԼԻԲԱՄԱ : Նա մեր հարց հայրն էր . . . մարդոյն անդրանիկ ծնունդը , ամենէն հօրն , ամենէն քաջագոյնն ու արիասիրտը : Միթէ հա՞րկ է որ շառագնիմ անոր վրայ ուստի մեր կեանքն ընդունած եմք . դիտէ՛ մեր ցեղին մարդիկը . նկատէ՛ իրենց հասակը և իրենց գեղեցկութիւնը , իրենց արիութիւնը , իրենց կորովը , իրենց աւուրց թիւը :

ՅԱՔԵԹ : Համրուած են անոնք :

ԱՀՈԼԻԲԱՄԱ : Թող այնպէս ըլլայ . . . բայց ցորջափ անչէջ պիտի մնայ զիրենք ոգևորող շունչը՝ փառք պիտի համարիմ ինձ իմ եղբարքս և հայրերս :

ՅԱՔԵԹ : Իմ հայրս և իմ ցեղս միայն իրենց Ստտուծով կը փառաւորուին , և դո՛ւ , Անահ . . . :

ԱՆՍԱՀ : Ինչ հրաման որ տայ մեր Ատտուածը , Մէթի և կայէնի Ստտուծոյն պէտք է որ հնազանդիմ և պիտի ջանամ հպատակել անմուռնչ : Բայց այս տիեզերական վրէժխնդրութեան ահաւոր վայրկենին , (եթէ ստուգիւ այդ վայրկեանը պիտի գայ) , եթէ համարձակէի բան մը խընդրել Ատտուծով , կեանք չպիտի ըլլար այն : Քոյր իմ , ո՛վ քոյր իմ , ի՞նչ կ'արժէ աշխարհ , առ ի՞նչ օգուտ են ուրիշ

աշխարհներն , և ամենէն դեղածիծաղ ապագայն՝ առանց երջանկաւէտ անցելոյն . . . առանց քու սիրոյդ . . . առանց հօրս սիրոյն , առանց այն ամեն առարկայից՝ որ ծընած են ինձ հետ , քաղցրանշոյլ աստղեր՝ որ կը լուսաւորէին իմ տխուր կեանքս մխիթարիչ պայծառութեամբ մը : Ահօլիրամս , եթէ կարելի է ներումն յուսալ . . . **Լինդրէ՛** զայն , ընդունէ՛ զայն , կը սոսկամ մահուանէ , եթէ հարկ է որ դու ևս մեռնիս :

**ԱՀՕԼԻԲԱՄԱ :** Ի՛նչ , այս երազատեսը , իւր հօրը տապանովը , խրատելի՛ զաշխարհ սոսկացնելու համար շինուած , խռովե՞ց իմ քոյրս . միթէ մեք Սերովբէից սիրուհիները չէ՞մք . և եթէ անոնց սէրը չվայելէինք իսկ , միթէ Նոյի որդիէն մեր կենաց փրկութիւնը խնդրել կարի՛ նուատութիւն չէ՞ մեզ : Ո՛հ , լաւ էր թէ . . . : Բայց անմիտ մ՛է նա՛ որ չարաչուք երազներ կ'երազէ , ցնճճք իւր վաստակեալ ուղեղին՝ զոր մերժուած տարիանք մը , գիշերային տըքնութիւնք խանգարած են և բորբոքած : Ո՛վ պիտի դժբախտ այս հսկայաբերձ լեռներն , այս հաստարեատ երկիրը . ո՛վ պիտի ըսէ այս ամսոց և այս պէտաց որ ուրիշ կերպարանք մ'առնուն թողլով զայն՝ զոր իրենց յաւիտենական ընթացքին մէջ անմիտօրս պահած են : Ո՛վ պիտի կրնայ ընել զայս :

**ՅԱԲԵԹ :** Նա՛ որ մէկ խօսքով ստեղծեց զանոնք :

**ԱՀՕԼԻԲԱՄԱ :** Ո՛վ լսեց այդ խօսքը :

**ՅԱԲԵԹ :** Տիեզերք , զոր իւր մէկ խօսքն ոչնչութենէ՛ ՚ի կեանս կոչեց : Ո՛հ , արհամարհանօք կը ժպտիս դու տակաւին : Քու Սերովբէներուդ հարցուր , եթէ չ'վկայեն այս ճշմարտութեան , ուրեմն այլ ևս անարժան են անուան՝ զոր կը կրեն :

**ՍԱՄԻԱԶԱ :** Ահօլիրամս , խոստովանէ՛ քու Աստուածդ :

**ԱՀՕԼԻԲԱՄԱ :** Ես ճանչցած եմ միշտ զայն՝ որոյ ձեռակերտն եմք մեք , Սամիազա , զայն՝ որ քու արարելչդ է և իմ . նա սիրոյ Աստուած մ'է և ո՛չ վշտաց :

**ՅԱԲԵԹ :** Աւա՛ղ , ի՛նչ է սէրը , եթէ ոչ վշտ մը . նա իսկ որ երկիրն ստեղծեց , իւր սիրոյն մէջ , ընդ հուսպ առ

նոր առաջին և ամենէն կատարեալ բնակչաց վրայ ցաւեցաւ դառնագին :

**ԱՀՕԼԻԲԱՄԱ :** Այդպէս կ'ըսեն :

**ՅԱԲԵԹ :** Այդ է ճշմարտութիւնը :

*Եւոյ* (Նոյ և Սեմ կը մտնեն)  
**ՅԱԲԵԹ :** Ի՛նչ կ'ընես հոս մեղաագործ մարդոց զաւակաց հետ , չե՞ն վախնար իրենց մօտալուտ կորստեան մասնակից ըլլալէ :

**ՅԱԲԵԹ :** Հայր իմ , երկրային արարած մը փրկել ջանալն յանցանք մը չիրնար ըլլալ . և տեսէ՛ք , չեն կրնար մեղապարտ ըլլալ , որովհետեւ հրեշտակաց հետ ընկերացած են :

**ՆՈՅ :** Տե՛ս ուրեմն սա հրեշտակներն որք Աստուծոյ դահլը կը թողուն կայէնի ցեղէն կիներ ընտրելու համար , տե՛ս սա երկինց որդիքն որ կը թափառին երկրի աղջկանց հետամուտ իրենց գեղեցկութենէն հրապուրեալ :

**ԱԶԱՐԻԷԼ :** Նա՛հապետ , դո՛ւ ըսիր զայդ :

**ՆՈՅ :** Վա՛յ , վա՛յ , վա՛յ , այդպիսի միութեանց , Աստուած երկինց և երկրի մէջ տեղը պատուար մը չ'կանդնե՞ց :

**ՍԱՄԻԱԶԱ :** Եհօվա զմարդն ի սրտոկեր իւր շատեղծե՞ց , Աստուած չսիրե՞ց իւր ձեռակերտը , և ի՛նչ կ'ընեմք մեք , եթէ ոչ նմանող կ'ըլլամք իւր աստուածային սիրոյն՝ որով կը գրգայ նա իւր ստեղծած էակաց վրայ :

**ՆՈՅ :** Ես մարդ մ'եմ , ինձ չվերարերիւր դատել իմ նրս մաններս և բնաւ իսկ Աստուծոյ որդիքն , բայց , որովհետեւ մեր Աստուածն հաճեցաւ յայտնել ինձ իւր դատաստանները , կը պատասխանեմ որ դատապարտելի գործ մ'է միշտ սերովբէից համար իրենց յաւիտենական օթեվանէն այս կորստական երկիրն իջնել :

**ԱԶԱՐԻԷԼ :** Եւ եթէ փրկելու համար ըլլայ :

**ՆՈՅ :** Ո՛չ , չէք կարող՝ ձեր բովանդակ փառքովն՝ փրկել ինչ որ դատապարտեց նա՛ որ այդ փառքը տուաւ ձեզ : Եթէ փրկութեան պաշտօն մ'ընդունած ըլլայիք , ընդեթէ փրկութեան պաշտօն մ'ընդունած ըլլայիք , ընդհանուր պիտի ըլլար այն և ո՛չ թէ կայէնի երկու աղջկանց հանուր պիտի ըլլար այն և ո՛չ թէ կայէնի երկու աղջկանց միայն յատուկ . գեղեցիկ են անոնք , բայց դատապարտեալ են :

ՅԱՐԵԹ : Ո՛վ , հայր իմ , մի՛ ըսեր զայդ :

ՆՈՅ : Որդեա՛կ իմ , որդեա՛կ իմ . եթէ՛ կ'ուզես խուսափել իրենց պատուհասէն , մուցի՛ր թէ՛ կան անոնք . անոնք ընդ հուսալ պիտի դադրին ապրելէ , և դու հայր պիտի ըլլաս նոր և լուսադոյն աշխարհի մը :

ՅԱՐԵԹ : Ո՛հ , թո՛ղ ինձ որ ես ալ կորսուիմ այս աշխարհի հետ և ասոնց :

ՆՈՅ : Արժանի՛ ես մահու այդպիսի խորհրդոյ մը համար . բայց նա որ փրկելու իշխանութիւնն ունի՛ պիտի փրկէ ըզքեզ :

ՍՍՄԻԱԶԱ : Եւ ի՞նչու նա և դու պիտի փրկուիք , և ոչ անոնք՝ զոր քու որդիք նախամեծար կը համարի իրմէ և քեզմէ :

ՆՈՅ : Հարցո՛ւր զայն անոր որ զքեզ աւելի մեծ ըրաւ ինձմէ և իմիններէս , և որոյ ամենակարողութեան հստատակեալ կաս դու ինչպէս որ մեք : Բայց ահա՛ իւր պատգամաբեր ոգեաց ամենէն քաղցրահամբոյրն ու հաւատարիմը : (Ռափայէլ հրեշտակապետը կը մտնէ :)

ՌԱՓԱՅԷԼ : Ողի՛ք , որոց արժանաւոր տեղն երկնային դահլին քովն է , ի՞նչ կ'ընէք հոս : Միթէ՛ ա՛յսպէս կը կատարէք ձեր պարտքն՝ երբ կը մօտի այն ժամն՝ ուր երկիրն անոր և անպաշտպան պիտի մնայ : Գարձէք ձեր երկրպագութիւնն ու խուսկը նուիրելու , անմահ ու յաւիտենական էակին եօթն հրեշտակապետաց հետ . ձեր տեղը երկնից մէջն է :

ՍՍՄԻԱԶԱ : Ռափայէլ , Աստուծոյ որդւոց առաջինն և զեղեցիկացնը , ո՞ր ատենէն ի վեր արդիւուած է հրեշտակաց յերկիր իջնել , որոյ վրայ յաճախ Եհովա իսկ իւր քայլից հետքը դրոշմել խոնարհեցաւ : Աստուած սիրեց այս աշխարհն և սիրելու համար ստեղծեց զայն . քանիցս զուարթաթուիչ իւր պատգամներն բերած եմք հոս , պաշտելով զնա իւր ամենափոքր գործոց մէջ , հսկելով այս մոլորակին վրայ՝ որ իւր ձեռքէն ելած աստեղց ամենէն նորաստեղծն է , և նախանձաւոր՝ արժանի պահելու իւր արարչին նորա ստեղծագործ բարբառոյն այս վերջին ծը-

նունդը : Ի՞նչու խոժոռ է քու ճակատդ , և ի՞նչու մտաւրւտ աւեր մը կ'սպառնաս մեզ :

ՌԱՓԱՅԷԼ : Եթէ՛ Սամիազա և Ազարիէլ իրենց տեղը կեցած ըլլային հրեշտակաց պարուց հետ , Եհովայի վերջին վճիռը հրեղէն տաւերով գրուած պիտի տեսնէին , և իրենց Արարչին կամքն ինձ չ'պիտի հարցնէին . բայց տգիտութիւնը միշտ մեղքէն անբաժին պիտի ըլլայ . ոգեաց գիտութիւնն իսկ կը նուազի քանի որ կ'աճի իրենց յիմար հպարտութիւնն , վասնզի կուրութիւնը անհնազանդութեան առաջին պտուղն է : Երբ բոլոր հրեշտակք թողած են զերկիր , դուք հոս կը մնաք՝ օտարտաի կրիւք հրարորբոք և մահկանացու զեղեցիկութեան մը համար տարփաւառ և դձձեալ : Սակայն մինչև հիմայ կը ներէ ձեզ Աստուած և ձեր հաւասարներուն ընկերութեան մէջ կը կոչէ զձեզ : Օ՛ն , դացէք , դացէք , կամ կեցէք և կորուսէք ձեր յաւիտենականութիւնը :

ԱԶԱՐԻԷԼ : Իսկ դո՞ւ , եթէ՛ մինչև հիմայ անձանօթ վճռով մ'արգիլուած է մեզ երկրի վրայ օթեւանիլ , դու իսկ մեզ նման յանցաւոր չե՞ս , վասն զի դո՛ւ ևս կը գըտնուիս այս դատապարտեալ հողագնացոյն վրայ :

ՌԱՓԱՅԷԼ : Ես եկած եմ զձեզ հրաւիրելու համար ձեր երկնային օթեւանը յանուն և ի հրաման Բարձրելոյն . իւր հրամաններն քաղցր են ինձ միշտ , և քաղցր է ինձ պարտաւորութիւնն՝ զոր կատարել կուգամ արդ : Յարդ ի միասին չըջեցանք անհունութեան անձայր դաշտաց մէջ . շարունակենք դարձեալ աստղէ յաստղ սլանալու թեակըցեալ : Իրա՛ւ , երկիրը պիտի մեռնի . մարդկային ցեղն , վերստին իւր խորոց մէջ կոչուած , պիտի թառամի ինչպէս նաև իւր բովանդակած առարկայից մեծագոյն մասը , բայց միթէ՛ կարելի չէ՞ր որ ստեղծուէր կամ կործանէր այս աշխարհն , առանց անմահից ռազմն խրամատուելու , անմահից՝ որք իրենց դատապարտութեան մէջ իսկ անմահ են :

Սաղան մեր եղբայրն ինկաւ և լուսադոյն համարեց առ ոչինչ գրել տանջուեցն քան ծառայել ու պաշտել : Բայց

դուք սերովբէք, որ անբիծ էք տակաւին, դուք որ նուազ հզօր էք քան այս հզօրագոյնն իւր բոլոր հրեշտակաց, յիշեցէք իւր անկումը, և խորհեցէք թէ մարդկան աղջըկունք ունին այնպիսի հրապոյր մը որ փոխարինէ երկնային երջանկութիւնը՝ որոյ կորուստը պիտի ողբաք, այլ յոյժ անագան: Ընդ երկար պատերազմեցայ և ընդ երկար պիտի պատերազմիմ տակաւին այն դուռը ոգւոյն հետ՝ որու ծանր ու անհանդուրժելի թուեցաւ արարած ըլլալու դաղափարը և մերժեց ճանչել զայն՝ որ գրած էր զինքն քերովբէից մէջ՝ մեծապայծառ՝ ինչպէս արեգակն աստեղաց պարուն մէջ, կը սիրէի զնա... երկինք: ո՞վ կրցաւ երբէք հաւասարելու Սաղանի գեղեցկութեան և զօրութեան, իբաց առեալ զայն՝ որ ստեղծեց զնա... ինչո՞ւ կարելի չէ յուսալ որ օր մը իւր ոճիրը մոռցուի... թերևս անպարիշտ տեսչ մ'է այս...: Բայց, դուք, որ տակաւին անկեալ չէք, իւր օրինակէն խրատուեցէք: Յաւիտենականութիւն Սաղանի կամ իւր Սասունոյն հետ, այս է այն ընտրութիւնը զոր ձեզ կը մնայ ընել: Նա զձեզ չփորձեց, չ'կրնար փորձել հրեշտակներն՝ որք ազատ են իւր թակարդներէն, բայց մարդն անսաց նորա ձայնին, և դուք՝ կնոջ... գեղեցիկ է կինը և օձին ձայնը նուազ յանկուցիչ ու նենգաւոր է քան անոր համբոյրը. օձը փոշոյն միայն յաղթեց. բայց կինը զահաւիժ կործանել կ'սպառնայ երկինքէն նոր հրեշտակներ՝ որ ի սէր անոր երկնային օրինաց զէմ կ'ազատամբին: Ո՛հ, փախէք, փախէք, ժամանակն է տակաւին: Դուք չէք կրնար մեռնիլ, բայց այս երկրածին աղջկունք յոչինչ պիտի գտնան, և դուք ողբազին աղաղակներով պիտի ընուք օղերը՝ կորստական և հողանիւթ էակաց համար, որոց յիշատակը՝ ձեր անմահութեան մէջ՝ իրենց կեանք արեւոյ արեգակէն վերջն ալ պիտի ապրի: Խորհեցէք, քանի՞ օն ձեր էութիւնը կը տարբերի անոնց էութենէն, և միայն այնու կը նմանիք անոնց որ անոնց պէս կրնաք վշտակրիլ: Ի՞նչու մասնակից կուզէք ըլլալ այն դառն վշտաց՝ որ երկրի դաւակաց բաժինը պարտին ըլլալ... որք տաքինքէ մաշուելու, անձկութիւններ

րէ հալելու, և հուսկ ուրեմն մահուընէ հնձուելու համար ստեղծուած են: Ո՛հ, եթէ նոյն իսկ Սասունոյ բարկութիւնն չհամարուէր իրենց կեանքը և ներուէր իրենց ժամանակաց մէջն ճամբայ հորդելու դէպ ի գերեզման, դարձեալ մեղաց և վշտաց ձեռքը խաղալիկ պիտի ըլլային միշտ:

**ԱՆՈՒԻԲԱՍԱ:** Թո՛ղ երթան. կը լսեմ այն ձայնը որ կը դուժէ թէ մեք ամենքս՝ պարտիմք մեռնիլ այն հասակէն յառաջ՝ որու մէջ մեռան մեր ալեգարդ նահապետները, այս ձայնը կիմացնէ թէ հո՛ն, վերը, ովկիանոս մը կայ պատարաստեալ, մինչդեռ հոս, անդնդոյն կոհակները բարձրանալով՝ երկնից հեղեղաց հետ խառնուելու պիտի երթան: Կերեւի թէ փոքր մաս մը միայն պիտի փրկուի, և կայէնի ցեղն՝ ի զուր պիտի դարձնէ իւր աչերն դէպ Սղաւսայ Սասունածը: Քոյր իմ, որովհետեւ այսպէս պիտի ըլլայ, որովհետեւ մեր բոլոր պաղատանքն չպիտի կրնան ժամուռան մը ներողութիւն ստանալ, բաժնուինք անոնցմէ զորս պաշտեցինք, երթանք զիմագրաւենք ալեաց դէմ, ինչպէս պիտի զիմագրաւէինք սուրբաց, եթէ մ'չ անխոռով գէթ աներկիւղ, ո՛չ այնչափ մեր վրաց ողբալով որչափ անոնց՝ որ մեզմէ ետքը պիտի ձայրին մե՛կեանացու կամ անմահ գերութեան մը մէջ, և ալեայ սպառնէ՞ յետոյ պիտի լան անոնց վրայ որ ա՛լ չպիտի կրնան արտուք թափել: Փախէ՛ք, Սերովբէք, փախէ՛ք դեպ ի՞ձեր յաւիտենական օթեմլաններն, ուր չի՞ծ մուշտածայն հողմաւք և կոհակը վարազագոյ: Մեր ճակատագիրն է մեռել, իսկ ձերն՝ ապրիլ յաւեա: Ստարիչը միայն կրնայ զիտեմլութէ կենաց կամ մե՛կու յաւիտենակեանութենէն՝ որը ճախամեծար է. հնազանդեցէք անոր, ինչպէս մեք օլթի հնազանդինք. թէպէտ և բովանդակ Սէթի սերնդեամբ զգուրութիւն շնորհուէր, չէի ուզեր ժամ մը երկարած գեղի կեանքս սուանց Սասունոյ կամաց, և ոչ իսկ անոր շնորհաց մէկ մասէն զրգեալ անձել զձեզ: Ծախէ՛ք, և երբ սլանաք թռչիք հեռի այս վայրերէն, խորհէ՛, ով Սամիաղա, որ իմ սէրս չեմ հեռ յերկինս սլեօք ելնէ, և եթէ ձեր ետէն նախը առնէ՛ք աչերս անարաօսք Ման, որտե՞տե՞ս այն

է որ հրեշտակի մը սիրունին լալը կ'արհամարհէ . երթա՛ս բարեաւ , այժմ կրնաս գալ , ջրհեղեղը անողը :

**ԱՆԱՀ :** Պէ՛տք է ուրեմն մեռնիլ , պէտք է որ զքեզ ալ կորսնցունեմ , Ազարիէլ : Ո՛հ իմ հոգիս , հոգիս , քու նախազգացումներդ ճնարիտ էին , և սակայն այնքան երջանիկ էի : Այս հարուածն , թէպէտ և նախատեսեալ , կը զարմացնէ զիս իբրև յանկարծադէպ աղէտ մը . փոյթ չէ , թո՛ղ դիս . . . ա՛հ , ի՛նչու համար , ոչ , քեզ չեմ վար դներ . . . փախիր , իմ վշտերս ժուղական չեն կրնար ըլլալ , բայց քուկիսներդ յաւիտենական կ'ըլլան , եթէ դու ինձ համար երկինքէն մերժուիս . դու արդէն Ադամաճին աղջկան մը համար շատ զոհողութիւն ընել հաճեցար . մեր բաժինը վիշտն է , և մեզ նման նաև այն երկնային ոգիները՝ որք զմեզ կը սիրեն՝ վշտաց և ամօթոյ կը մատնուին : Հրեշտակն՝ որ առաջին անգամ գիտութեան գաղտնիքը մերկացաւ մեզ՝ իւր հրեշտակապետական գահէն թաւալազրոր կործանեցաւ անծանօթ երկիր մը . բայց դու , Ազարիէլ . . . ո՛չ դու ինձ համար դժբաղդ չափտի ըլլաս : Գնա՛ , և մի լար , դու չես կրնար լալ . բայց քու անարտօսը վիշտդ աւելի դառն ու աղէկէ՛զ պիտի ըլլայ . մոռցիր զայն որու համայնաւէր Ովկէանու գազան ալիք չափտի կրնան այս վշտաց հաւասար տաղնապ մը պատճառել : Փախիր , փախիր , հեռի քու տեսութենէդ , նուազ դըժուարին պիտի ըլլայ ինձ մեռնիլ :

**ՅԱՐԵԹ :** Ո՛հ , մի բտեր զայդ , ո՛հ , հայր իմ , և դու , հրեշտակապետ , սա ճակտին խիստ ու անարատ պայծառութեանը վրայ երկնային գթութիւնը կը կարդամ . թո՛ղ այս աղջկունք այս անեղը Ովկիանոսին կատաղութեանը չը զոհուին , թող զանոնք ալ ընդունի մեր տապանը , և կամ թո՛ղ ես ալ մեռնիմ :

**ՆՈՅ :** Լուութիւն , կրից որդի , լուութիւն , եթէ քու սիրտդ կը տրտնջէ , զէթ լեզուդ թող չթշնամանէ քու Աստուածդ : Ապրէ ինչպէս նա կը պահանջէ , մեռիր , երբ նա կը հրամայէ , արդարոց մահուամբ , և ոչ կայենի ցեղին նման . մի ևս այլ տրտնջեր , կամ հեծէ լռիկ , դադրէ՛ զերօ

կինս քու անձնասէր բողոքներովդ ճանճրացնելէ : Կուգե՛ս որ Աստուած քեզ համար յանցաւոր ըլլայ : Այո՛ , յանցաւոր կ'ըլլար նա՛ , եթէ իւր վճիռներն փոխէր յողուտ մահկանացու վշտի մը : Մարդ եղիր , կրէ անտրտունջ այն ցաւերն՝ զոր կրնայ կրել Ադամայ սերունդը :

**ՅԱՐԵԹ :** Այո՛ , հայր իմ , բայց , երբ ամենքն կորնչին անհետ , երբ կապուտակ անապատին վրայ մենք միայն մնանք ալեծուփ , երբ կոհակք իրենց խորոց մէջ ծածկեն մեր սիրելի երկիրը , և ա՛լ աւելի սիրելի մեր բարեկամներն և մեր եղբարք այս անյատակ անդունդին մէջ թաղուին , ո՛վ պիտի կրնայ յայնժամ մեր արտասուքն ու մեր ողբերը դադրեցնել : Աւերակաց լուութեան մէջ պիտի կրնա՞նք հանդիստ դառնել . ով Աստուած , Աստուած եղիր և խնայէ՛ մինչ տակաւին ժամանակ կայ : Ադամայ անկու մը մի՛ նորոգեր . յայնժամ երկու էակք միայն բոլոր մարդկային սեռը կը կազմէին . բայց այսօր այնչափ բազմացած են երկրի բնակիչք որ ալիքներն և անճրևու կաթիլներն նուազ առատութեամբ պիտի տեղան քան իրենց զերեզմաններն , եթէ կայենի որդիք կարենան գերեզման մը ունենալ :

**ՆՈՅ :** Լուէ՛ , ժպիրհ , քու խօսքերուդ իւրաքանչիւրը մէկ մէկ ոճիր է . հրեշտակապետ , ներէ այս երկտասարդին յուսահատութեան :

**ՌԱՓԱՅԷԼ :** Սերովբէք , այս մահկանացուաց լեզուն կըրից լեզուն է . դուք որ անրիժ էք և առանց կրից , կամ այնպէս պարտիք ըլլալ . դուք կրնաք ինձ հետ երկինք դառնալ :

**ՍԱՄԻՍՉԱ :** կրնանք նաև չդառնալ . մենք մեր ընտրութիւնն ըրած եմք , և պատրաստ եմք անոր հետեանքը կըրելու :

**ՌԱՓԱՅԷԼ :** Այո է ձեր պատասխանը :

**ԱԶԱՐԻԷԼ :** Ինչ որ նա ըսաւ՝ նոյնը և ես կը կրկնեմ :

**ՌԱՓԱՅԷԼ :** Դու՞ ալ . . . լաւ ուրեմն , ոյս վայրկեանէս դուք ձեր բովանդակ իշխանութենէն մերկացեալ և օտար ըլլալով՝ ձերբարար չի՛ն , ահա՛ կը բաժնուիմ ձեզմէ :

**ՅԱՐԵԹ :** Աւա՛ղ, ու՛ր պիտի երթան, մտի՛կ ըրէք, մըտի՛կ ըրէք, լերան ծոցէն չարագուշակ ձայներ կը լսուին որ հետզհետէ կը սաստկանան. լերան վրայ փոքրիկ զեփիւռ մը չնչեր, և սակայն բոլոր տերևները կը դողան, բոլոր ծաղիկները իրենց բուներէն խլուելով կ'ընան : Երկիրը կը հեծէ իբր ծանրակիր բեռան մը տակ ընկճեալ :

**ՆՈՅ :** Մտի՛կ ըրէք, մտի՛կ ըրէք, ծովային թռչնոց կանչիւններն կը լսուին . խիտ առ խիտ միգամած երկինքը կը ծածկեն ամալի նման, և կը թռչտին լերան դագաթին բողբոսիքը, ուր երբէք անոնցմէ մին չէր համարձակած բարձրանալ, նոյն խակ ամենէն ահաւոր մրրկաց ատեն . ընդ հուպ այս իրենց միակ ափունքը պիտի ըլլայ, և յետոյ այն ևս պիտի անհետի :

**ՅԱՐԵԹ :** Արեգա՛կը, արեգա՛կը, կը ծագի նա, բայց ոչ իւր բարերար պայծառութեամբը . և իւր սկաւառակին շուրջը պատող սեաւ շրջանակը կը գուժէ երկրին թէ իւր վերջին օրը հասած է : Ասպք գիշերուան նման սեաւ են և մթին . միայն դոյզն ինչ պղնձագոյն է հորիզոնին այն կէտը՝ ուսկից երբեմն լուսանշոյլ արշալոյսներ կը ծագէին :

**ՆՈՅ :** Կը տեսնէ՞ք սա յանկարծառոյ փշլակը . հեռաւոր շանթին յառաջընթաց նշանն է, կը մերձի, փախինք, փախինք, թողո՛ւնք տարերաց իրենց մեղապարտ որսը . . վազենք հոն ուր մեր սուրբ տապանը իւր փրկաւէտ ծոցը կ'ընծայէ մեզ պատասպարան ընդդէմ նաւարեկութեան :

**ՅԱՐԵԹ :** Ո՛վ հայր էմ. կեցի՛ր, իմ սիրելի Անահա ամեհի պէտաց ձեռքը ձի՛ թօղուր :

**ՆՈՅ :** Մի՛թէ անոնց ձեռքը չպիտի թողունք ինչ որ կեանք ունի և կը շնչէ . երթա՛նք :

**ՅԱՐԵԹ :** Ո՛չ, եօ պէ՛տի կենամ :

**ՆՈՅ :** Մեռի՛ք ուրծե՛ն անոնց հեօ : Ինչզէս կը համարձակիս աչճորդ գէ՛ղ այս սպառնական երկինքը վերցնել և փրկելու քանակ ինչ որ ամէն բան կը միաբա՛նի գաւառապարտերը՝ աստուածային արդար բարկութեան հետ աջակցած :

**ՅԱՐԵԹ :** Բարկութիւնը և արդարութիւնը կրնան՞ ի միասին ընթանալ :

**ՆՈՅ :** Հայհոյիչ, կը համարձակի՞ս տրտունջ բառնալ այսպիսի վայրկեանի մը մէջ :

**ՌԱՓԱՅԷԼ :** Նա՛հապետ, տակաւին իբրև՞հայր վարուէ . քաղցրացուր քու խոփոռեալ ճակատդ . քու որդիդ պիտի ապրի, հակուակ իւր յիմարութեան . չգիտեր թէ ի՛նչ կ'ըսէ . սակայն հեղձամղձուկ հեծեծանքներով չ'պիտի խըմէ զայրացեալ ալեաց դառն փոփուրը . բայց երբ իւր ցնորքը դադրի, քեզ նման արդար և առաքինի պիտի ըլլայ . նա չպիտի կորսուի մարդոց աղջիկներուն հետ ինչպէս երկնից այս դաւակունք :

**ԱՀՕԼԻԲԱՄԱ :** Մորիկը կը մօտենայ, երկինք և երկիր կը միաբանին ջնջելու ամեն ինչ որ կեանք ունի : Մեր զօրութեան և յաւիտենական կարողութեան մէջ տեղ մրցումն անհաւասար է :

**ՍԱՄԻՍՉԱ :** Բայց մեր զօրութիւնը ձեզ հետ է, մենք գճեզ խաղաղաւէտ լուսագունտ մը պիտի տանիմք, ուր Անահ և դու բախտակից պիտի ըլլաք մեզ, և եթէ դուք երկիրը կորսնցնելուդ չցաւիք, մենք ալ երկնից կորուստը պիտի մոռնանք :

**ԱՆԱՀ :** Ո՛վ իմ հօրս սիրելի վրաններն, ո՛վ իմ ծննդեանըս որորանը, ո՛վ լերինք, ձորք, անտառք, երբ դուք ա՛լ չըլլաք, ո՛վ պիտի սրբէ իմ արտասուքներս :

**ԱԶԱՐԻԷԼ :** Քու ամուսինդ եզոզ հրեշտակը . մի՛ վախնար բնաւ, թէպէտ և երկինքէն արտաքսուած եմք, տակաւին շատ ապաստանարաններ ունիմք՝ ուսկից ոչ ոք պիտի կրնայ վանել զմեզ :

**ՌԱՓԱՅԷԼ :** Ապստամբ, քու խօսքերդ այնքան ամպտրիշտ են, որքան տկար և անզօր է այսուհետեւ քու բազուկդ . այն բոցեղէն սուրը՝ որ վանեց երկնային դրախտէն աստղին մարդը՝ կը շողայ տակաւին հրեշտակապետին ձեռաց մէջ :

**ԱԶԱՐԻԷԼ :** Չ'կրնար զմեզ սպաննել . փոշուրն ուղղէ քու մահու սպառնալիքներդ, և սրոյ վրայ անոնց հետ խօսէ որք թափելու արիւն ունին : Ի՛նչ են քու սուրերդ մեր պնմահ աչաց առջև :



ՌՒՓԱՅԷԼ : Ահաւաստիկ քու զօրութիւնդ փորձելու վայր-  
կեանն հասած է , պիտի սովորիս վերջապէս թէ որքան ու-  
նայն է քու Աստուծոյդ հրամանաց դէմ պատերազմելը .  
քու բոլոր զօրութիւնդ քու հաւատքիդ մէջն է : (Մահկա-  
նացուք կը տեսնուին որք կը փախչին ապաստանարան մը  
փնտռելով :

ՊԱՐ ՄԱՀԿԱՆԱՅՈՒՍՅ : Երկինք և երկիր յիրեար կը  
խառնուին , ով Աստուած , ո՛վ Աստուած ի՞նչ ըրինք :  
Ողորմէ մեզ , մտիկ ըրէ , անտառաց անասուններն իսկ ի-  
րենց պաղատանքը կ'ուզղեն առ քեզ : Վիշապը սողալով  
դուրս կենէ իւր որջէն , և կուգայ , սոսկացեալ , մարդոց  
հետ խառնուիլ անվասա . թռչունք իրենց ցաւազին աղա-  
ղակներովը օդը կը ընուն : Հեռացոր , ո՛վ Եհովա , քու  
բարկութեանդ դաւազանը , դժա՛ քու ձեռակերտ աշխար-  
հիդ անյուսուցեան վրայ . լսէ ո՛չ միայն մարդոյն , այլ և  
բովանդակ բնութեան աղերսը :

ՌՒՓԱՅԷԼ : Բարեաւ մնա՛ , երկիր , բարեա՛ւ մնայք , և  
դուք , դժբախտ զաւակունք փոշոյ . չեմ կարող և ոչ իսկ  
պարտական եմ ձեզ օգնելու . . . ձեր վճիռը տրուած է :  
(Ռափայէլ կը հեռանայ :

ՅԱԲԵԹ : Ինչ ինչ ամպեր կը սլանան ինչպէս անգեղք ի-  
րենց որսին ետեւէն , մինչդեռ այլք , ժայռի նման անյող-  
դողդ և անշարժ , հրամանի կսպասեն իրենց վրէժխնդիր  
հեղեղները թափելու : Այլ ևս հաստատութիւնը չպիտի  
ծածկուի կապտագոյն վերարկուով մը , բնաւ աստղ մը  
չպիտի չողայ հոն . մահը արեգակին տեղ բարձրացաւ հո-  
րիզոնին վրայ . տօգոյն և գերեզմանական փայլ մը օդոց  
մէջ սփռեցաւ :

ԱԶԱՐԻԷԼ : Եկու՛ր Անա՛հ , թո՛ղ այս բանտը՝ որոյ քասոն  
է հիմն . . . տարերք զայն իւր նախկին վիճակին դարձնել  
կուգան . իմ թեւերուս հովանոյն տակ ապահով պիտի ըլ-  
լաս , ինչպէս երբեմն արծուին ձագն իւր մօր թեւոց տակ . . .  
Թողունք որ մուչէ քառսը իւր բոլոր շղթայագերծ տարերք-  
ներովն , մի սոսկար իրենց ահաւոր կռուոյն գոռումէն :  
Երթանք ասկէ աւելի գեղեցիկ աշխարհ մը փնտռելու ուր

օղեղէն կեանքի մը շունչը պիտի ծծես . այս մութ ամպե-  
րէն զատ այլ հաստատութիւնք ալ կան : (Ազարիէլ և Սա-  
միասա կը թռչին և կ'աներևութանան Անահի և Ահօլիբա-  
մայի հետ :

ՅԱԲԵԹ : Մեկնեցա՛ն , գացի՛ն , աներևոյթ եղան անպաշտ-  
պան աշխարհի ողբոց ժխտին մէջն , և թէպէտ ասորին ,  
թէպէտ մեռնին երկրին միւս բնակչաց հետ . . . ա՛լ եր-  
բէք իմ աչերս չսլիտի տեսնեն զԱնահ :

ՊԱՐ ՄԱՀԿԱՆԱՅՈՒՍՅ : Ո՛վ որդիդ Եոյի , դժա՛ քու եղ-  
բարցդ վրայ . ի՞նչ . դու զմեզ ամենքս թողո՞ւլ կ'ուզես ,  
զայրացեալ ակաց ձեռքը մատնուած , մինչդեռ դու տա-  
րերց ահեղասաստ պատերազմին դէմ անըոյթ ապաւէն մը  
պիտի գտնես քու երջանիկ տապանիդ մէջ :

ՄԱՅՐ ՄԸ . (Իր որդին Յարեթի կարկառելով ) Ո՛հ , այս  
տղան տապանն ընդունէ . ցաւոց մէջ երկնեցի զնա , բայց  
երջանիկ էի զայն իմ ծոցէս կախուած տեսնելով : Ի՞նչու հա-  
մար ծնաւ , ի՞նչ ըրաւ . . . ի՞նչ յանցանք գործեց այս տա-  
կաւին կաթնկեր մանուկը Եհովայի բարկութեան կամար-  
համարհանաց արժանանալու համար : Իմ կաթիս մէջ ի՞նչ կայ  
ուրեմն մեղսապարտ որ մահը այսպէս գերկինս և զերկիր կը  
զինէ իմ զաւակս ոչնչացնելու , և ակաց մէջ իւր անմեղ  
շունչը խեղդելու համար : Փրկէ՛ զայն , որդի՛դ Մէթի , կամ  
անիծեա՛լ եղիր . . . անոր հետ՝ որ զքեզ ստեղծեց . ինչ-  
պէս նաև քու ցեղդ , որու զոհ կ'ըլլամք մեք :

ՅԱԲԵԹ : Լռէ՛ . . . անիծելու ժամ չէ այս . . . այլ ա-  
ղօթելու :

ՊԱՐ ՄԱՀԿԱՆԱՅՈՒՍՅ : Աղօթելու . . . և ո՞ւր պիտի  
բարձրանայ աղօթքը , մինչ ուռուցեալ ամպերն թանձրամած  
կը պատեն լեռանց կատարը , և իրենց հեղեղները կը թա-  
փեն յերկիր . մինչ իւր սահմաններէն դուրս դիմող ով-  
կէանն ամէն թուրք կը խորտակէ և մինչև իսկ անապա-  
տաց ծարաւը կը յագեցնէ . անիծեա՛լ ըլլայ նա որ զքեզ  
և քու հայրդ ստեղծեց . գիտեմք թէ մեր անէծքներն ու-  
նայն են , պէտք է մեռնիլ . բայց , որովհետև մեր ճակա-  
տագիրն անդարձ է , ի՞նչու օրհնութիւններ երգենք և ի՞ն-

չու ծուներ դնենք անողոք Աստուծոյ մ'առջև . եթէ եր-  
կիրը ստեղծեց , թո՛ղ ամէնայ որ կործանելու համար միայն  
յօրինեց զայն . . . ահա՛ , ահա՛ ալիքներն , որոնց մաշն-  
չիւնքն առոյգ և կենսախայտ բնութիւնը կը համրացնեն : Ան-  
տառաց հսկայ ծառերը լեռնաբերձ ալիքներէն կը ծածկը-  
ւին , իրենց ծերութեան մէջ տակաւին այնքան կանաչա-  
զարդ ծառերն՝ որ զԵդեմ հովանաւորող թփոց հետ դուրս  
ելան երկրին ծոցէն , երբ Եւա տակաւին Ադամայ օժիտ  
չէր բերած գիտութիւնը . . . կամ երբ Ադամ իւր գերու-  
թեան առաջին երգը չէր երգած : Ովկիանոսն իրենց ծաղ-  
կունքը կը փետէ , ովկիանոսը որ կը բարձրանայ , կը բարձ-  
րանայ միշտ և գոգցես երկնից հասնել կը բաղձայ : Իզո՛ւր  
մեր աչերն յերկինս կը վերցնենք . կը խոնարհին երկինք ,  
ծովուց հետ կը խառնուին և կը ծածկեն զԱստուած մեր  
աղերսական հայեցուածներէն : Փախի՛ր , որդի՛գ Նոյի , փա-  
խի՛ր , գնա՛ հանգչել աներկիւղ ովկիանու վրայ քեզ պատ-  
րաստուած վրանին մէջ . տես թէ ինչպէս կը ծփին ջուրց  
երեսը այնքան մարդոց դիակներն՝ որոց մէջ քու գեղեցիկ  
օրերդ սահեցան , և այն ատեն ուղղէ առ Եհովա՛ զքու ե-  
րախտադիտութեանդ երգը :

ՄԱՀԿԱՆԱՅՈՒ ՄԸ : Երանի՛ անոնց որք ի Տէր կը մեռնին .  
թէպէտև ջուրերը երկիրը կը ծածկեն , պաշտենք իւր շըր-  
թանց վճիռը . ինձ կեանք օտաւա . . . իմ կեանքս իւր պար-  
զեն է , և կ'առնու յինէն ինչ որ իւրն է , և եթէ իմ աչերս  
գոցուին առ յաւէտ , եթէ իմ տկար ձայնս ա՛լ չկարենայ  
լուել իւր գահուն առջև , օրհնեա՛լ ըլլայ Տէրն այն ամեն  
բանին համար որ եղած է և կ'ըլլայ . . . վասն զի ամէն  
բան իւրն է . . . ժամանակը . . . միջոցը . . . յաւիտե-  
նականութիւնը . . . կեանքը . . . մահը . . . ամէն ինչ որ  
ծանօթ է և անծանօթ . . . սահմանաւորն և անճառ ան-  
հունութիւնը . ինչ որ ստեղծեց՝ կրնայ եղծանել . . . : Եւ  
. . . կենաց թեթև շունչի մը համար պէ՞տք է հայհոյել և  
հեծել : Ո՛չ , կը մեռնիմ ինչպէս ապրեցայ . . . հաւատքով  
. . . և անյողոքող պիտի մնամ , թէպէտ համայն տիե-  
զերք հիմն ի վեր տապալին :

ՊԱՐ ՄԱՀԿԱՆԱՅՈՒՄՅ , Ո՞ւր փախչինք , բարձր լերա՞նց  
վրայ . . . ո՛չ . . . իրենց հեղեղները սոսկալի շառագմամբ  
կը գահավիժեն ովկիանու առջև որ արդէն դէպ իրենց կը  
բարձրանայ , իւր կոհակաց տակ ծածկելով բլուրներն և  
ամեն քարանձաւներու խորոց մէջ թափանցելով : (Ալին մը  
կուգայ ) :

ԿԻՆ ՄԸ : Ո՛հ , փրկեցէ՛ք զիս , փրկեցէ՛ք զիս . մեր ձորն  
այլ ևս չկայ . . . իմ հայրս և իւր խորանը , իմ եղբարքս  
և իրենց հօտերը , սաղարթագեղ ծառերն՝ որ կէս օրուան  
ատեն իրենց հովանին կ'ընծայէին՝ մեզ և երեկոյին իւր-  
եանց ծոցին մէջ սլատապարող թռչնոց քաղցր դալարովիկը  
մեր ախանջները կ'ըմայլեցնէր . . . այն քաղցրակարկալ առ-  
ուակը՝ որ մեր կանաչաւէտ արօտավայրներն կ'ոռոգէր , այս  
ամենն աներևոյթ եղան . երբ այս առաւօտ լեռը ելայ ,  
դարձայ դէպ այս օթեփանն օրհնելու համար զայն . . .  
և ոչ մէկ տերև մը կը շարժէր և հիմայ այն անուշակ վայ-  
րերն ա՛լ չկան . . . Ի՞նչու համար ստեղծուեցայ :

ՅԱՅԵԹ : Մեռնելու համար , մեռնելու երիտասարդ ,  
բայց երջանիկ , քանզի կը մեռնիս առանց տեսնելու այս  
տիեզերաց գերեզմանը որուն վրայ ընդունայն ողբալու  
դատապարտուած եմ : Ինչո՞ւ համար հարկ է որ ես ապ-  
րիմ մինչ ամէնքը կը կորսուին : (Չուրերը կը բարձրանան ,  
մարդիկ կը փախչին ամեն կողմէ , շատեր ալիքներէն կը  
բռնուին , մահացուաց պարը կը ցրուի և լերանց վրայ իրենց  
ապաւէն մը կը փնտռեն : Յարեթ ժայռի մը վրայ կը կե-  
նայ , մինչդեռ տապալներ հեռուէն ծփալով գէպի յինքն կը  
յառաջանայ ) :



Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mostly illegible due to fading and the texture of the paper.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mostly illegible due to fading and the texture of the paper.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mostly illegible due to fading and the texture of the paper.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mostly illegible due to fading and the texture of the paper.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mostly illegible due to fading and the texture of the paper.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mostly illegible due to fading and the texture of the paper.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mostly illegible due to fading and the texture of the paper.

653

2013

